ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային 1
+374 12 88 88 88
info@ligainsurance.am
ligainsurance.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ
Խորհրդի կողմից
(22.05.2023թ. Խորհրդի նիստի թիվ 06
արձանագրություն)

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ TC750-01-02
Խմբագրություն՝ 06

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ (ԱՎՏՈԿԱՍԿՈ)
3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ԱՎՏՈԿԱՍԿՈ)
4. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ
5. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ
6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
7. ՎՆԱՍԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
8. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ
9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ/ՎԿԱՅԱԳԻՐԸ
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ
12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
14. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ
15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)
16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ
17. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

Ավտոմեքենաների կամավոր ապահովագրության սույն պայմանները մշակված են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից տրված ԱՊՈ թիվ 0009 Լիցենզիայի հետևյալ դասերին՝

- Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն (բացառությամբ երկաթուղային)
- Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն
- Դժբախտ պատահարներից ապահովագրություն

Ապահովագրական ծածկույթի կիրառելիության համար անհրաժեշտ է, որ տվյալ դասը/բաժինը նշված լինի ապահովագրության պայմանագրում՝ համապատասխան ապահովագրական գումարի և ապահովագրավճարի նշմամբ:
Ավտոմեքենաների կամավոր ապահովագրության սույն Պայմանները հանդիսանում են դրանց համաձայն կնքված ապահովագրության պայմանագրերի անբաժանելի մասը:
Ավտոմեքենաների կամավոր ապահովագրության սույն Պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր/պրոդուկտներ (այսուհետ՝ Ծրագիր):

1. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններ (այսուհետ՝ Պայմաններ)՝ Ավտոմեքենաների կամավոր ապահովագրության պայմաններ:
Ապահովագրող՝ «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական ՓԲԸ:
Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած գործունակ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, հիմնարկ:
Շահառու՝ «Ավտոկասկո» ապահովագրության դեպքում՝ Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրում նշված իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ այլ իրավական կարգավիճակ ունեցող անձ, որն ունի ավտոտրանսպորտային միջոցը պահպանելու հետ կապված գույքային շահ՝ համաձայն ՀՀ օրենսդրության կամ այլ պայմանագրի և իրավունք ունի ստանալու ապահովագրական հատուցում:
Գրավադրված ավտոտրանսպորտային միջոցի ապահովագրության դեպքում ապահովագրության պայմանագրում նշված գրավառու հանդիսացող Շահառուն իրավունք ունի ստանալու հատուցում՝ վճարման օրվա դրությամբ գրավով ապահովված պարտավորության գումարի սահմաններում: Հատուցման մնացած մասը վճարվում է Ապահովադրին կամ այլ Շահառուին, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվության դեպքում Շահառու է հանդիսանում ապահովագրական պատահարի արդյունքում Տուժողը:
Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում Շահառու է հանդիսանում Ապահովագրված անձը, նրա ժառանգները:
Եթե «Ավտոկասկո» ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցման պահանջ ներկայացնելու պահին ապահովագրության պայմանագրում նշված Շահառուն չունի գույքային շահ ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի պահպանման նկատմամբ, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովադրին, եթե վերջինս ունի շահ ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի պահպանման նկատմամբ: Իսկ այն դեպքում, երբ և՛ Ապահովադիրը, և՛ Շահառուն չունեն գույքային շահ ապահովագրված ավտոտրանսպորտային միջոցի պահպանման նկատմամբ, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է այն անձին, ով ունի նման շահ:
Ապահովագրված անձ՝ վարորդ և/կամ ուղևորներ, որոնք գտնվում են ավտոտրանսպորտային միջոցում և որոնց գծով առկա է ավտոտրանսպորտային միջոցի վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրություն:
Լիազորված վարորդ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ավտոտրանսպորտային միջոցն օգտագործելու իրավունք ունեցող գործունակ ֆիզիկական անձ, ով որպես լիազորված վարորդ նշված է ապահովագրության պայմանագրում: Լիազորված վարորդը պետք է լինի 21 (քսանմեկ) տարին լրացած ֆիզիկական անձ և ունենա համապատասխան կարգի ավտոմեքենա վարելու առնվազն 3 (երեք) տարվա վարորդական փորձ, եթե ապահովագրության պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
Տուժող՝ Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով անձնական կամ գույքային վնասներ կրած անձ, ով ՀՀ օրենքներով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունի վնասի հատուցում ստանալու իրավունք:
Ավտոտրանսպորտային միջոց (այսուհետ՝ ԱՄ)՝ Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներով ուղևորներ և բեռներ փոխադրելու, ինչպես նաև ոչ տրանսպորտային աշխատանքներ կատարելու համար սարքավորված անիվավոր ավտոտրանսպորտային միջոց (այդ թվում՝ անձնական օգտագործման ավտոմեքենաներ, ավտոբուսներ, միկրոավտոբուսներ, բեռնատար ավտոմեքենաներ, մոտոցիկլետներ, քարշակներ, թեթև մարդատար ավտոմեքենաներ), որոնք ապահովագրված են սույն Պայմանների համաձայն:
Լրացուցիչ սարքավորումներ (այսուհետ՝ ԼՍ)՝ ԱՄ-ի գործարանային կոմպլեկտացիայի մեջ չմտնող սարքավորումներ, այսինքն՝ ԱՄ-ի արտադրողի կողմից ԱՄ-ի արտադրության (հավաքման) ժամանակ չտեղադրված սարքավորումներ, կոմպլեկտներ, օրինակ՝ աուդիո, վիդեո համակարգեր, ոչ գործարանային անվահեծեր, բարձրախոս, համակարգիչ, ոչ գործարանային ավտոձայնագրիչ և այլն, որոնք ապահովագրված են սույն Պայմանների համաձայն:
Ճանապարհատրանսպորտային պատահար (այսուհետ՝ ՃՏՊ)՝ ԱՄ-ի՝ ճանապարհով շարժվելու ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած պատահար, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ, վնասվել են ԱՄ-ներ, կառույցներ, բեռներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս, ներառյալ մեկ այլ մեխանիկական ԱՄ-ի պատճառով կանգառի վիճակում գտնվող ապահովագրված ԱՄ-ին պատճառված վնասը:
Ապահովագրության պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր)՝ Սույն Պայմանների համաձայն Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված փաստաթուղթ է, որում սահմանված են ցամաքային տրանսպորտի ապահովագրության (բացառությամբ երկաթուղային), ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության և դժբախտ պատահարներից ապահովագրության դասերով իրականացվող ապահովագրության պայմանները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ ապահովագրության պայմանագրի/վկայագրի համար նախատեսված պարտադիր այլ պայմանները:
Ապահովագրական գումար՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է կատարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում: Ապահովագրական գումարի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սակայն «Ավտոկասկո» ապահովագրության դեպքում այն չի կարող գերազանցել Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին ապահովագրված օբյեկտի իրական (շուկայական) արժեքը և Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում նվազեցվում է յուրաքանչյուր հատուցման գումարի չափով:

Ոչ ագրեգատային ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով (անկախ դրանց ծավալից և քանակից), որը տեղի է ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում:
Ագրեգատային ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում բոլոր ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի գործողության ընթացքում: Ընդ որում, ապահովագրական գումարը ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է հատուցման գումարի չափով:
Ապահովագրական սակագին՝ Ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ, որը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:
Ապահովագրավճար՝ Ապահովագրության դիմաց վճար, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին՝ համաձայն Պայմանագրում/ Վկայագրում սահմանված կարգի և ժամկետների:
Ապահովագրավճարի հերթական մասի վճարում՝ Ապահովագրավճարի տարաժամկետ վճարում նախատեսող Պայմանագրերի/Վկայագրերի դիմաց մասերով կատարվող վճարումներ, որոնց չափերը և վճարման ժամկետներն Ապահովագրողի կողմից սահմանվում են Պայմանագրում/Վկայագրում:
Չհատուցվող գումար՝ Վնասի չափ, որը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից: Այն սահմանվում է Պայմանագրում/Վկայագրում՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ:
ԱՄ-ի ոչ լրիվ արժեքով ապահովագրության դեպքում չհատուցվող գումարը նվազեցվում է ապահովագրական գումարի և իրական (ապահովագրական) արժեքի հարաբերությանը համամասնորեն հաշվարկված վնասի իրական չափից:
Չհատուցվող գումարի չափը յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում մնում է անփոփոխ, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:
Չհատուցվող գումարը կարող է սահմանվել ապահովագրական գումարի նկատմամբ ինչպես տոկոսներով, այնպես էլ բացարձակ արժեքով:
Պայմանական չհատուցվող գումար՝ Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում չհատուցվող գումարի չափը չգերազանցող վնասի հատուցման համար, սակայն հատուցում է վնասն ամբողջությամբ, եթե այն գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ փոխհատուցվող վնասը բոլոր դեպքերում նվազեցվում է չհատուցվող գումարի չափով յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:
Ապահովագրական ռիսկ՝ ենթադրվող իրադարձություն, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը:
Ապահովագրական պատահար՝ տեղի ունեցած իրադարձություն, որը նախատեսված է Պայմանագրով/Վկայագրով, որի տեղի ունենալու հիմքում ընկած է պատահականության բնույթը և որի արդյունքում ապահովագրված ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին և/կամ երրորդ անձանց և/կամ ԱՄ-ի մեջ գտնվող վարորդին և ուղևորներին պատճառվել է վնաս, ինչն առաջացրել է Ապահովագրողի՝ Ապահովադրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու պարտականություն:
Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովադրին (Շահառուին, Տուժողին, Ապահովագրված անձին) վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ կամ հատուցում համարժեք գույքով կամ վնասված գույքի վերանորոգմամբ:
Աշխարհագրական սահմանափակումներ՝ Սույն ապահովագրության գործողությունը սահմանափակված է ՀՀ և ԼՂՀ տարածքով, եթե այլ տարածք նշված չէ Պայմանագրում/Վկայագրում:
Դժբախտ պատահար՝ ԱՄ-ի շահագործման կամ կանգառի վիճակում դրա մեջ գտնվելու ընթացքում Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած անսպասելի, հանկարծակի և անկանխատեսելի պատահար, որը հանգեցրել է Ապահովագրված անձի մարմնական վնասվածքի կամ մահվան:
ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացում՝ ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի կոնստրուկտիվ ոչնչացումն է, երբ ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի վերանորոգման, վերականգնման արժեքը (ներառյալ՝ Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա ծախսերը) գերազանցում է ԱՄ-ի իրական (ապահովագրական) արժեքի 75%-ը (յոթանասունհինգ տոկոսը):
ԱՄ-ի օգտագործումից բխող վնաս՝ ավտոտրանսպորտային միջոցով (ներառյալ՝ ավտոտրանսպորտային միջոցի պայթյունի կամ հրդեհվելու հետևանքով) պատճառված վնաս՝ ավտոտրանսպորտային միջոցի շարժիչի գործադրմամբ կամ առանց դրա:
Ձմեռային անվադողեր՝ ԱՄ-ի անվադողեր, որոնք հատուկ մշակված են տարվա ցուրտ ժամանակաշրջանում օգտագործելու համար, երբ օդի ջերմաստիճանը ցածր է +7 °C-ից և որոնց վրա առկա է M+S կամ M+S և «Ձյան փաթիլ» նշանը:

Ապահովագրական ռիսկեր

Հրդեհ՝ ներառյալ այրման նյութերի, ինչպես նաև հրդեհի մարման համար օգտագործված ջրի (փրփուրի) կամ այլ նյութերի ազդեցություն՝ վնասի պատճառում չկառավարվող այրման հետևանքով, որը պատճառում է նյութական վնաս, վնաս քաղաքացիների կյանքին և առողջությանը, վնաս հասարակության և պետության շահերին: Այրումն առաջացնում է բոց (կրակ) և մարմանդ վառում: Հրդեհի ժամանակ ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի վրա անուղղակի ազդեցություն են համարվում նաև կողմնակի երևույթները՝ մրոտումը (ծխոտումը), մակերեսային հալումը, հրդեհի մարման ժամանակ կիրառված ջրի (փրփուրի կամ այլ միջոցների) ազդեցությունը:

Պայթյուն՝ մեծ հարվածային ուժով էներգիայի սաստիկ արագության միանվագ առաջացման արդյունքում պատճառված վնասը, որն առաջացել է որևէ քիմիական միացության կամ նյութի (տաք խառնուրդի, գազի և այլն) բաղադրության փոփոխման (քիմիական ռեակցիայի) արդյունքում: Պայթյունի արդյունքում առաջացող հարվածային ուժը (պայթյունային ալիքը) քայքայում է առարկան, ինչից առաջանում է պայթյունը, ինչպես նաև վնասներ է հասցնում ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին:

Երրորդ անձանց հակահրավական գործողություններ՝ երրորդ անձանց կողմից հետևյալ հանցանքների/հանցագործությունների կատարումը. ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի միտումնավոր ոչնչացումը կամ վնասումը, անզգուշությամբ ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի ոչնչացումը կամ վնասումը, ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի նկատմամբ խուլիգանությունը, վանդալիզմը:

ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի փախցնում ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին ապօրինաբար տիրանալն է (փախցնելն է) առանց հափշտակելու նպատակի:

Ավազակություն՝ ապահովագրված ԱՄ-ն և/կամ ԼՍ-ն հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ այդպիսի բռնություն գործադրելու սպառնալիքով:

Գողություն՝ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի գաղտնի հափշտակությունը:

Կողոպուտ՝ ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի բացահայտ հափշտակությունը:

Ուժեղ քամի՝ վնասների պատճառում երկրագնդի մակերեսի նկատմամբ 14 մ/վ-ից ավելի արագությամբ կամ հորիզոնական բաղադրիչով օդի շարժման արդյունքում:

Փոթորիկ՝ վնասների պատճառում շատ ուժեղ և երկարատև քամու հետևանքով, որի արագությունը գերազանցում է 32մ/վ-ը:

Մրրիկ՝ վնասների պատճառում 20մ/վ-ից ավելի արագությամբ երկարատև շատ ուժեղ քամու արդյունքում, որն առաջացնում է ուժեղ ալեկոծություններ ծովում և ավերածություններ ցամաքում:

Մրրկասյուն՝ վնասների պատճառում մինչև 1000 մ տրամագծով ուժգին մեծածավալ մթնոլորտային պտտահողմի արդյունքում, որի ներսում օդը պտտվում է մինչև 100 մ/վ արագությամբ, և որն օժտված է մեծ ավերիչ ուժով:

Հեղեղում՝ վնասների պատճառում տարածքը ջրով ողողվելու արդյունքում, որը հանդիսանում է տարերային աղետ (կարող է առաջանալ հորդացման, գետավարարման, սառցակուտակման, սառցակապության, գետաբերանում ջրի ավելացման ժամանակ գետի ջրի բարձրացման հետևանքով, ինչպես նաև ջրատեխնիկական կառույցների ճեղքման դեպքում):

Կարկուտ/խոշոր կարկուտ՝ վնասների պատճառում տարվա տաք ժամանակներին 5մմ-ից ավելի տրամագծով խիտ սառույցից սառցե մասնիկների տեսքով տեղացող մթնոլորտային տեղումների հետևանքով, որոնք սովորաբար ուղեկցվում են ամպրոպով զուգորդվող տեղատարափով:

Տվյալ տեղանքի համար անսովոր մթնոլորտային տեղումներ՝ հորդառատ անձրևի, ձյունատեղման, երկարատև անձրևների հետևանքով վնասների պատճառում, որոնք տվյալ տեղանքի համար հատուկ չեն և իրավասու մարմինների կողմից որակվում են որպես անսովոր:

Կայծակնահարում, որը չի առաջացրել հրդեհ՝ էլեկտրաստատիկ էլեկտրականության պարպում, որն առաջացել է ամպերի միջև կամ երկրի մակերևույթի և ամպերի միջև (գծային կայծակ), կամ գնդաձև լույս արձակող մարմնի տեսքով (գնդակերպ կայծակ), որն անցել է ապահովագրված մարմնի տարրերի միջով և թողել է ուղղակի ջերմային, մեխանիկական կամ էլեկտրական ազդեցություն, կամ երկրորդային ազդեցություն՝ բարձր էլեկտրական պոտենցիալը ապահովագրված գույքի տարրերի մեջ ուղղելու տեսքով, ինչը բերել է դրա վնասմանը:

Սույն Պայմաններով հատուցման ենթակա է կայծակի էլեկտրական պարպման ջերմային ազդեցությամբ ապահովագրված գույքին պատճառված վնասը, ներառյալ՝ կայծակի հարվածային ալիքի մեխանիկական ազդեցության, կայծակի էլեկտրական ազդեցության հետևանքով այրումից և ավիրումից ապահովագրված գույքին պատճառված վնասը:

Սողանք՝ վնասի պատճառում լեռնային ապարների զանգվածների լանջով տեղաշարժվելու հետևանքով, որն առաջանում է սեփական քաշի և լրացուցիչ բեռնվածության ներգործությամբ՝ լանջի ողողաքանդման, ջրադինամիկ ճնշման, գերխոնավացման, սեյսմիկ կամ տեխնածին ցնցումների և այլ երևույթների հետևանքով:

Դարափուլ (քարաթափում)՝ վնասների պատճառում ձորերի զառիվայր և զառիթափ լանջերի վրայի լեռնային ապարների, մեծ զանգվածների անսպասելի պոկվելու և ընկնելու հետևանքով, որոնք հիմնականում տեղի են ունենում լեռնային ապարների կապակցվածության թուլացման հաշվին, որն առաջանում է հողմահարման պրոցեսների, մակերեսային և ստորգետնյա ջրերի գործունեության ազդեցության հետևանքով:

Սելավ՝ վնասի պատճառում ջրի և փխրուն ապարների խառնուրդից բաղկացած մեծ կործանարար ուժով սրընթաց հոսանքի հետևանքով, որը հանկարծակի առաջանում է ոչ մեծ լեռնային գետերի ավազաններում՝ ուժգին անձրևների կամ բուռն ձնհալի, ինչպես նաև անցանկալի ճեղքման արդյունքում:

Ձնահյուս՝ վնասի պատճառում զառիվար լեռնային լանջերով ձյան և (կամ) սառույցի արագ, անսպասելի առաջացած դեպի վար շարժման հետևանքով, ինչը վտանգ է ներկայացնում մարդկանց կյանքի և առողջության համար, պատճառում է նյութական վնասներ:

2. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԵՎ/ԿԱՄ ԴՐԱՆՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՍԱՐՔԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ (ԱՎՏՈԿԱՍԿՈ)

2.1. Համաձայն սույն Պայմանների Պայմանագրով/Վկայագրով «Ավտոկասկո» ապահովագրության դեպքում ապահովագրության օբյեկտ են հանդիսանում ՀՀ օրենսդրությանը չհակասող Ապահովադրի/Ապահովագրված անձի (Լիազորված վարորդի) գույքային շահերը, որոնք կապված են Ապահովադրի/Ապահովագրված անձի (Լիազորված վարորդի) ԱՄ-ի և/կամ ԱՄ-ում տեղակայված ԼՍ-ի տնօրինման, օգտագործման և տիրապետման հետ և որոնք առաջանում են ԱՄ-ի և/կամ ԱՄ-ում տեղակայված ԼՍ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացման, կորստի կամ վնասվելու հետևանքով:

2.2. Սույն Պայմանների հիման վրա **ապահովագրման ենթակա են**՝

ա) Ճանապարհային ոստիկանությունում գրանցված ԱՄ-ները,
բ) ավտոսրահներում վաճառվող, սակայն ճանապարհային ոստիկանությունում չգրանցված/չհաշվառված նոր ԱՄ-ները: Այս դեպքում «Ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի կորուստ» ռիսկի գծով ապահովագրությունն սկսում է գործել ԱՄ-ն ճանապարհային ոստիկանությունում գրանցելու/հաշվառելու պահից:
գ) ԱՄ-ի ԼՍ-ները (բացառությամբ՝ գազի սարքավորման (բալոն և այլն)):
2.3. Ապահովագրման ենթակա չեն այն ԱՄ-ները՝
ա) որոնց նկատմամբ պահպանված չեն մաքսային ձևակերպման կանոնները,
բ) որոնք գրանցված են ինտերպոլի տվյալների բազայում, ինչի մասին ԱՄ-ի տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրում կատարված է համապատասխան գրառում:
2.4. Եթե Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին ապահովագրման ենթակա ԱՄ-ն ունի վնասվածքներ, ապա Ապահովագրողն ապահովագրական պատահարի արդյունքում պատճառված վնասի չափը նվազեցնում է Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին առկա վնասվածքի համապատասխան չափով: Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը վերականգնում է ԱՄ-ի վնասվածքը, ապա նա պարտավորվում է վնասը վերականգնելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ԱՄ-ն ներկայացնել Ապահովագրողին՝ զննման, ինչի արդյունքում Ապահովագրողը պարտավոր է կազմել համապատասխան զննման ակտ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ԱՎՏՈԿԱՍԿՈ)

3.1. Սույն Պայմաններով ապահովագրական պատահար են համարվում ԱՄ-ի և/կամ դրանում տեղակայված ԼՍ-ի (բացառությամբ՝ գազի սարքավորման (բալոն և այլն)) ոչնչացումը, վնասումը կամ կորուստը հետևյալ ռիսկերի ի հայտ գալու արդյունքում՝
3.1.1. Վթար (ներառյալ՝ ՃՏՊ)՝ Սույն Պայմաններով վթար է համարվում ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի վնասումը կամ ոչնչացումը ՃՏՊ-ի արդյունքում, այդ թվում՝ ՃՏՊ-ի արդյունքում ԱՄ-ի հրդեհվելը, այլ ավտոտրանսպորտային միջոցի, շարժական, անշարժ առարկաների (այդ թվում՝ կառույցների, արգելքների) հետ բախվելը կամ մարդկանց, կենդանիներին վրաերթի ենթարկելը, շրջվելը, ԱՄ-ի վրա որևէ առարկայի վայր ընկնելը, այդ թվում՝ ծառերի, ձյան և սառույցի, ջրի մեջ ընկնելու հետևանքները,
3.1.2. Տարերային աղետներ՝ ուժեղ քամի, փոթորիկ, մրրիկ, մրրկասյուն, հեղեղում, կարկուտ/խոշոր կարկուտ, տվյալ տեղանքին ոչ հատուկ մթնոլորտային տեղումներ, կայծակնահարում, որը չի առաջացրել հրդեհ, սողանք, դարափուլ (քարաթափում), սելավ, ձնահյուս,
3.1.3. Հրդեհ՝ ներառյալ այրման նյութերի, ինչպես նաև հրդեհի մարման համար օգտագործված ջրի (փրփուրի) կամ այլ նյութերի ազդեցություն, պայթյուն,
3.1.4. Երրորդ անձանց հակաիրավական գործողություններ՝ հրկիզում, պայթեցում, ինչպես նաև ԱՄ-ի առանձին մասերի և/կամ ԼՍ-ի վնասում,
3.1.5. Ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի կորուստ՝ ԱՄ-ի փախցնելու, գողության, կողոպուտի, ավազակության, երրորդ անձանց կողմից դրա դիտավորյալ ոչնչացման (վնասման) արդյունքում և ԼՍ-ի գողության, կողոպուտի, ավազակության, երրորդ անձանց կողմից դրա դիտավորյալ ոչնչացման (վնասման) արդյունքում:
3.2. Պայմանագրով/Վկայագրով ԱՄ-ն կարող է ապահովագրվել ռիսկերի հետևյալ համակցություններից՝
3.2.1. Ֆիզիկական վնաս՝ ապահովագրված ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին պատճառված վնաս կամ դրա ոչնչացում սույն Պայմանների 3.1. կետում թվարկված (բացառությամբ 3.1.5. ենթակետում նշված) ռիսկերի ի հայտ գալու արդյունքում,
3.2.2. Կորուստ՝ ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի կորուստ սույն Պայմանների 3.1.5. ենթակետում թվարկված ռիսկերի ի հայտ գալու արդյունքում,
3.2.3. Ավտոկասկո՝ ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին պատճառված վնասը, դրա ոչնչացումը կամ կորուստը միաժամանակ «Ֆիզիկական վնաս» և «Կորուստ» ռիսկերի համակցությունից:
3.3. Ռիսկի աստիճանի փոփոխություն՝
Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին, ինչպես նաև դրա գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է ստորև նշված հանգամանքների կամ դրանցում փոփոխությունների մասին անհապաղ (իսկ 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նաև գրավոր) հայտնել Ապահովագրողին՝
ա) ԱՄ-ի օտարում, գրավադրում և/կամ տնօրինման, տիրապետման և օգտագործման իրավունքի այլ սահմանափակում,
բ) Համարանշված մասերի փոփոխություն (թափք, շարժիչ, հաշվառման համարանիշ և այլն),
գ) ԼՍ-ի տեղադրում, եթե Պայմանագիրը/Վկայագիրը նախատեսում է ԼՍ-ների ապահովագրություն,
դ) ԱՄ-ի բանալիների կամ գրանցման փաստաթղթերի՝ (տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի) կորուստ,
ե) ԱՄ-ի օգտագործման նպատակի փոփոխում (օրինակ՝ ԱՄ-ն նախկինում օգտագործվել է անձնական նպատակներով, սակայն հետագայում սկսել է օգտագործվել նաև որպես տաքսի և այլն),
զ) այլ հանգամանքներ, որոնք կարող են ազդեցություն ունենալ ապահովագրական ռիսկի աստիճանի փոփոխության վրա:
3.4. Եթե պատահարը տեղի է ունեցել ԱՄ-ն այնպիսի անձի կողմից վարելու դեպքում, ում տարիքը փոքր է եղել 21-ից (քսանմեկից) կամ ով չի ունեցել համապատասխան կարգի ԱՄ-ն վարելու առնվազն 3 (երեք) տարվա վարորդական փորձ, Ապահովագրողն իրավունք ունի Պայմանագրում/Վկայագրում նշված չհատուցվող գումարի չափը կրկնապատկել, իսկ Պայմանագրում/Վկայագրում չհատուցվող գումար նշված չլինելու դեպքում կիրառել չհատուցվող գումար՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված ԱՄ-ի ապահովագրական գումարի 1.5%-ի (մեկ ամբողջ հինգ տասնորդական տոկոսի) չափով:
3.5. Ապահովագրական ռիսկի աստիճանի մեծացումն առաջացնող հանգամանքների մասին տեղեկացված Ապահովագրողն իրավունք ունի պահանջել փոփոխելու Պայմանագրի/Վկայագրի պայմանները կամ վճարելու ռիսկի մեծանալուն համաչափ լրացուցիչ ապահովագրավճար:

3.6. Եթե Ապահովադիրը (Շահառուն) սույն Պայմանների հիմքերով Ապահովագրողի՝ Պայմանագրի/Վկայագրի պայմանները փոփոխելու կամ լրացուցիչ ապահովագրավճար վճարելու պահանջը մերժում է, ապա Ապահովագրողն իրավունք ունի սույն Պայմանների համաձայն և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջել Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծում:
3.7. Եթե Ապահովադիրը (Շահառուն) ստացել է վնասների հատուցում երրորդ անձանցից (վնաս պատճառողից), ապա Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու իր պարտականությունից և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:
3.8. Ապահովադիրը պարտավոր է անհապաղ հայտնել Ապահովագրողին երրորդ անձանցից վնասների հատուցում ստանալու մասին, իսկ այն ստանալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին հայտնել այդ մասին նաև գրավոր:
3.9. Սույն Պայմաններով ապահովագրական պատահար չեն համարվում՝
3.9.1. ապահովագրված ԱՄ-ի բանալիների կորուստը,
3.9.2. ԱՄ-ի ներկածածկի վնասումը (այդ թվում՝ ավազի, փոքր չափի քարերի, ծառերի կամ թփուտների ճյուղերի ներգործության, ԱՄ-ի լվացման հետևանքով), որը թափքի կամ նրա առանձին մասերի երկրաչափական չափերի ձևախախտման չի հանգեցրել,
3.9.3. Մարտկոցի կամ այլ էլեկտրասարքավորումների վնասումը թույլ միացման հետևանքով,
3.9.4. ԱՄ-ի հայելիների, անվադողերի, անվասկավառակների, անվահեծերի և/կամ դեկորատիվ կափարիչների հափշտակելը,
3.9.5. ԼՍ-ի և/կամ ԱՄ-ի մասերի կորուստը, եթե ապահովագրական պատահարի ժամանակ դրանք գտնվում էին ապահովագրված ԱՄ-ից դուրս,
3.9.6. ԱՄ-ի հաշվառման համարանիշի կորուստը կամ վնասումը,
3.9.7. Էլեկտրասարքերի, մեխանիկական հանգույցների անսարքությունը, այդ թվում՝ էլեկտրահաղորդալարերի թերությունը, ԱՄ-ի այլ մասերի, հանգույցների և ագրեգատների կոտրումը, խափանումը, շարքից դուրս գալը, եթե վերջիններս ապահովագրական պատահարի ուղղակի հետևանք չեն,
3.9.8. ավտոմագնիտոլայի և/կամ ավտոմագնիտոլայի հանվող դիմացի պանելի կորուստը կամ վնասումը, եթե հանվող դիմացի պանելը մնացել էր ապահովագրված ԱՄ-ի մեջ:

4. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

4.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի (Ապահովագրված անձի) գույքային շահերը՝ կապված ԱՄ-ի օգտագործումից բխող Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվության հետ, որն առաջանում է Պայմանագրում/Վկայագրում նշված տարածքում ԱՄ-ի օգտագործումից երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասների հետևանքով:
4.2. Ապահովագրական գումար է հանդիսանում այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Տուժողին (երրորդ անձին) հատուցել կրած վնասները:
4.3. Պայմանագրում/Վկայագրում կարող են նախատեսվել առանձին ապահովագրական գումարներ՝
ա) Տուժողի կյանքին և առողջությանը պատճառված վնասի համար (մարմնական վնաս),
բ) Տուժողի գույքին պատճառված վնասի համար (գույքային վնաս):
4.4. Ապահովագրական պատահարներ և ապահովագրության լրացուցիչ պայմաններ:
4.4.1. Համաձայն սույն Պայմանների ապահովագրական պատահար է համարվում Պայմանագրում/Վկայագրում նշված ԱՄ-ի օգտագործման ընթացքում Ապահովադրի և/կամ Լիազորված վարորդի կողմից վթարի արդյունքում Տուժողի կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասի համար քաղաքացիական պատասխանատվության առաջացումը, որը հանգեցնում է Ապահովագրողի՝ ապահովագրական հատուցում կատարելու պարտականության առաջացմանը.
ա) եթե վթարը տեղի է ունեցել 2 (երկու) և ավելի վարորդների մեղքով, որոնցից մեկը հանդիսանում է Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովադրի և/կամ Լիազորված վարորդի մեղքի աստիճանին համամասնորեն: Այն դեպքում, երբ հնարավոր չէ որոշել վարորդներից յուրաքանչյուրի մեղքի աստիճանը, ապա այդ անձինք Տուժողի առջև կրում են համապարտ պատասխանատվություն,
բ) եթե Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցումը պետք է վճարվի մի քանի Տուժողների, և տվյալ ապահովագրական պատահարի գծով Ապահովագրողին ներկայացված պահանջների գումարը գերազանցում է Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրական գումարը, Տուժողներից յուրաքանչյուրին ապահովագրական հատուցումները վճարվում են վնասների ընդհանուր գումարում նրանց պատճառված վնասների չափերին համամասնորեն՝ ապահովագրական գումարի սահմաններում:
4.5. Սույն Պայմաններով ապահովագրական պատահարներ են ճանաչվում սույն Պայմանների 3.1. կետում նշված ռիսկերի ի հայտ գալու արդյունքում Պայմանագրում/Վկայագրում նշված ԱՄ-ով՝
ա) այլ ավտոտրանսպորտային միջոցին պատճառված ֆիզիկական վնասները (ֆիզիկական վնաս, լրիվ կառուցվածքային ոչնչացում),
բ) այլ շարժական կամ անշարժ գույքին պատճառված վնասը կամ լրիվ կառուցվածքային ոչնչացումը,
գ) ֆիզիկական անձանց առողջությանը պատճառված վնասը, աշխատունակության ժամանակավոր կորուստը (եթե Պայմանագրում/Վկայագրում առկա է հատուկ նշում տվյալ ռիսկն ապահովագրելու վերաբերյալ) կամ մահը:

5. ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՎԱՐՈՐԴԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

5.1. Ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի գույքային շահերը՝ կապված ԱՄ-ի օգտագործման ընթացքում առաջացած ապահովագրական պատահարի արդյունքում վարորդի և/կամ ուղևորների կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ:
5.2. Ապահովագրական գումար է հանդիսանում այն դրամական գումարը, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վարորդին և/կամ ուղևորներին հատուցել կրած վնասները:
5.3. Պայմանագիրը/Վկայագիրը կարող է կնքվել՝ «նստատեղերի համակարգով» կամ «համամասնական համակարգով»:
5.3.1. «Նստատեղերի համակարգով» Պայմանագրի/Վկայագրի կնքման դեպքում ապահովագրական գումարը սահմանվում է նույն չափով ԱՄ-ի յուրաքանչյուր նստատեղի համար, որտեղ կարող է գտնվել Ապահովագրված անձը (վարորդը, ուղևորը): Ընդ որում՝ նստատեղերի («ապահովագրված նստատեղերի») քանակը չի կարող գերազանցել տվյալ ԱՄ-ն արտադրող գործարանի կողմից սահմանված նորմատիվների համաձայն նստատեղերի առավելագույն քանակը:
5.3.2. «Համամասնական համակարգով» Պայմանագրի/Վկայագրի կնքման դեպքում ապահովագրական գումարը սահմանվում է բոլոր Ապահովագրված անձանց համար: Ապահովագրված անձանց քանակը չի կարող գերազանցել տվյալ ԱՄ-ն արտադրող գործարանի կողմից սահմանված նորմատիվների համաձայն նստատեղերի առավելագույն քանակը: Յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարի չափը սահմանվում է ընդհանուր ապահովագրական գումարից բաժնեմասի տեսքով: Ընդ որում՝ յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարի չափը սահմանվում է ապահովագրական պատահարից հետո և կազմում է՝

- ընդհանուր ապահովագրական գումարի 40% (քառասուն տոկոսը), եթե տուժել է մեկ Ապահովագրված անձ,
- ընդհանուր ապահովագրական գումարի 35% (երեսունհինգ տոկոսը), եթե տուժել է 2 (երկու) Ապահովագրված անձ,
- ընդհանուր ապահովագրական գումարի 30% (երեսուն տոկոսը), եթե տուժել է 3 (երեք) Ապահովագրված անձ,
- ընդհանուր ապահովագրական գումարի բաժնեմասը, որն իրենից ներկայացնում է ապահովագրական գումարի 100% (հարյուր տոկոսի) և տուժողների ընդհանուր քանակի հարաբերությունը, եթե տուժել է 4 (չորս) կամ ավելի Ապահովագրված անձ:

5.4. Սույն Պայմաններով ապահովագրական պատահար են համարվում Պայմանագրում/Վկայագրում նշված ԱՄ-ի օգտագործման ընթացքում սույն Պայմանների 3.1. կետում նշված ռիսկերի ի հայտ գալու արդյունքում վարորդի և/կամ ուղևորների՝
ա) մարմնական վնասվածքները,
բ) 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերումը,
գ) մահը,
դ) աշխատունակության ժամանակավոր կորուստը (եթե Պայմանագրում/Վկայագրում առկա է հատուկ նշում տվյալ ռիսկն ապահովագրելու վերաբերյալ):
5.5. Սույն Պայմաններով ապահովագրական պատահար չի համարվում Ապահովադրի (Լիազորված վարորդի) դիտավորյալ գործողությունների արդյունքում սեփական անձին վնասվածքներ հասցնելը (ներառյալ ինքնասպանությունը):

6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Ապահովադիրը (Շահառուն) և/կամ Լիազորված վարորդը պարտավոր է ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում՝
ա) ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց և նրան հայտնի դառնալու պահից հետո անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում) հայտնել համապատասխան իրավասու մարմիններին, մասնավորապես՝

- **ՃՏՊ-ի (վթարի**) դեպքում՝ ՀՀ Ոստիկանության ՃՈ մարմիններին,
- **Հրդեհի** դեպքում՝ ՀՀ ԱԻՆ-ի Հայաստանի փրկարար ծառայությանը,
- **Տարերային աղետների** դեպքում՝ Արտակարգ իրավիճակների նախարարությանը,
- **Երրորդ անձանց հակահիրավական գործողությունների** դեպքում՝ ՀՀ Ոստիկանությանը,
- **Կորստի** դեպքում՝ՀՀ Ոստիկանությանը,
- **Մարմնական վնասվածքի** դեպքում՝ բժշկական հաստատությանը

Ապահովադիրը (Շահառուն) և/կամ Լիազորված վարորդն իրավունք ունի ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց և նրանց հայտնի դառնալու պահից հետո այդ մասին չհայտնել համապատասխան իրավասու մարմիններին Ապահովագրողի հետ համաձայնության գալու դեպքում,
բ) ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց հետո և նրան հայտնի դառնալու պահից անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում) տեղի ունեցած պատահարի մասին հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամարներով,
գ) տեղի ունեցած պատահարի մասին Ապահովագրողին հայտնել հնարավորինս ամբողջական տեղեկատվություն, որը հայտնի է իրեն ծանուցելու պահի դրությամբ (ամսաթիվը, ժամը և վայրը, պատահարի առաջացման հանգամանքները և այլն),
դ) Ապահովագրողին պատահարի մասին ծանուցելու ամսաթվից ոչ ուշ, քան 10 (տասն) աշխատանքային օրվա ընթացքում ներկայանալ Ապահովագրողի գրասենյակ և լրացնել Ապահովագրողի կողմից հաստատված ձևի գրավոր հայտային դիմում՝ պատահար տեղի ունենալու փաստի մասին իրեն հայտնի բոլոր մանրամասների շարադրմամբ,

ե) պատահարի վայրում սպասել Ապահովագրողի ներկայացուցչին (եթե Ապահովագրողն Ապահովադրին/Լիազորված վարորդին/ահազանգողին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և կատարել նրա ցուցումները,
զ) պատահար տեղի ունենալու դեպքում անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել վնասների կանխման և/կամ հնարավորության դեպքում՝ նվազեցման ուղղությամբ, ինչպես նաև այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը, հետևել Ապահովագրողի ցուցումներին,
է) Ապահովագրողի կողմից նշված ժամկետներում Ապահովագրողին և/կամ անկախ փորձագետին տրամադրել ապահովագրված ԱՄ-ի զննումն իրականացնելու հնարավորություն՝ վնասի չափը որոշելու նպատակով,
ը) պահպանել վնասված ԱՄ-ն այն վիճակում, որում այն հայտնվել էր պատահարից հետո՝ նախքան Ապահովագրողի և/կամ անկախ փորձագետի կողմից դրա զննումը, ինչը պետք է կատարվի Ապահովագրողին պատահարի մասին հայտնելուց և զննման հնարավորություն ընձեռելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում: ԱՄ-ին պատճառված վնասների վերանորոգում կամ այլ ձևափոխում թույլատրվում է միայն այն դեպքում, երբ դա կատարվել է մարդկանց անվտանգության և/կամ փրկության նկատառումներից ելնելով,
թ) նշել պատահարում ներգրավված այլ ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, պարզել պատահարում ներգրավված այլ կողմերի և վկաների անունները, հասցեները և անձը հաստատող փաստաթղթերի համարները (հնարավորության դեպքում),
ժ) չտեղաշարժել ԱՄ-ն կամ պատահարի հետ կապ ունեցող առարկաները, և/կամ չլքել պատահարի վայրը մինչև համապատասխան իրավասու մարմնի (համաձայն 6.1 կետի ա) ենթակետի) աշխատակիցների և Ապահովագրողի ներկայացուցչի ժամանումը (եթե Ապահովագրողն Ապահովադրին/Լիազորված վարորդին/ահազանգողին տեղեկացրել է, որ իր ներկայացուցիչը ժամանելու է դեպքի վայր) և պատահարի փաստով բոլոր անհրաժեշտ տեղեկատվության արձանագրումը,
ի) պատահարի այլ մասնակիցներին, որոնք վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մտադրություն ունեն, հայտնել տեղեկություններ Պայմանագրի/Վկայագրի վերաբերյալ, ինչպես նաև Ապահովագողի անվանումը, հասցեն և հեռախոսահամարը,
լ) ներկայացնել սույն Պայմանների 7.1 և/կամ 7.2 և/կամ 7.5 և/կամ 7.6 կետերով նախատեսված անհրաժեշտ փաստաթղթերը:
6.2. Հայտի կամ հնարավոր հայտի դեպքում Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը, որը մտադիր է հատուցման պահանջ ներկայացնել կամ արդեն իսկ հատուցման պահանջ է ներկայացրել, չպետք է ընդունի որևէ պատասխանատվություն կամ չպետք է հանդես գա որևէ առաջարկով, խոստումով կամ կատարի որևէ վճարում կամ իրավական ծախսեր առանց Ապահովագրողի հետ նախնական գրավոր համաձայնության գալու և պետք է Ապահովագրողին տրամադրի օժանդակություն, որը կարող է պահանջել Ապահովագրողը և չպետք է գործի ի վնաս Ապահովագրողի շահերի:
6.3. Եթե Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդն ապահովագրական պատահարի արդյունքում ստացել են մարմնական վնասվածքներ կամ, ելնելով առողջական վիճակից, ի վիճակի չեն եղել 6.1. կետի «բ» մասում նշված ժամանակահատվածում տեղյակ պահել Ապահովագրողին պատահարի մասին, ապա Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը պարտավոր են Ապահովագրողին ներկայացնել ի վիճակի չլինելու փաստը հավաստող համապատասխան գրավոր հիմնավորում՝ օրինակ՝ ՀՀ-ում լիցենզավորված բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանք:
6.4. 6.1. կետում նշված պարտականությունները (դրանց կատարման հնարավորության դեպքում) կրում է նաև Շահառուն, եթե տեղյակ է իր օգտին Պայմանագրի/Վկայագրի կնքված լինելու մասին և եթե մտադիր է օգտվել ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից:
6.5. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը կհատուցի Պայմանագրում/Վկայագրում նշված տարածքի սահմաններում Տուժողի (եթե տվյալ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված է ԱՄ-ի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն) և Ապահովադրի՝ պատահարի արդյունքում ԱՄ-ի վնասման կամ ոչնչացման դեպքում տեղափոխումը (էվակուացիան) պատահարի վայրից մինչև մոտակա ավտոտեխսպասարկման կետը Ապահովադրի, Տուժողի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ: Ընդ որում՝ Ապահովագրողի կողմից վճարվող տեղափոխման ծախսերը չեն կարող գերազանցել 25,000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամը:

7. ՎՆԱՍԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

7.1. «Կորուստ» ռիսկի գծով պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի կողմից լիազորված անձն Ապահովագրողին է ներկայացնում՝
ա) Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,
բ) ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի) բնօրինակները,
գ) ապահովագրված ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերի բնօրինակները,
դ) բանալիների, ապահովագրված ԱՄ-ում տեղադրված հակաառևանգման բոլոր էլեկտրոնային և էլեկտրամեխանիկական համակարգերի ակտիվ և պասիվ ակտիվատորների (եթե այդպիսիք կան) քարտերի, մեխանիկական հակաառևանգման սարքերի բոլոր բանալիների լրիվ կոմպլեկտները,
ե) քրեական գործ հարուցելու մասին իրավասու մարմնի որոշման պատճենը,
զ) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:
Եթե սույն կետի «բ» և «դ» մասերում նշված փաստաթղթերը և/կամ իրերը մնացել են գողացված ԱՄ-ում, Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի կողմից

լիազորված անձը Ապահովագրողին է ներկայացնում ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող, իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք:

7.2. «Ֆիզիկական վնաս» ռիսկի գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի կողմից լիազորված անձն Ապահովագրողին է ներկայացնում՝

ա) Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,

բ) ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին ԱՄ-ն վարող անձի վարորդական իրավունքի բնօրինակը,

գ) ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի) բնօրինակները,

դ) ապահովագրված ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող փաստաթղթերի բնօրինակները,

ե) ապահովագրական պատահար տեղի ունենալու փաստը հաստատող փաստաթղթերը համապատասխան իրավասու մարմիններից (ՀՀ Ոստիկանությունից, ՀՀ Ոստիկանության ՃՈ մարմիններից, ՀՀ ԱԻՆ-ի Հայաստանի փրկարար ծառայությունից և այլն),

զ) ԱՄ-ի էվակուացիոն ծառայության դիմաց մասնագիտացված կազմակերպությունների կողմից ներկայացված հաշիվների բնօրինակները, եթե էվակուացիան իրականացվել է Ապահովագրողի համաձայնությամբ,

է) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.3. Ապահովագրական պատահարի արդյունքում ապահովագրված ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին պատճառված վնասի գնահատումը կարող է իրականացվել Ապահովագրողի կամ Ապահովագրողի կողմից մատնանշված անկախ փորձագետի կողմից, որի ծառայության վճարը վճարում է Ապահովագրողը:

7.4. Ապահովադիրն (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/ Լիազորված վարորդի կողմից լիազորված անձն իրավունք ունի կազմակերպել կրկնակի փորձաքննության իրականացում՝ Ապահովագրողի կամ անկախ փորձագետի եզրակացության հետ չհամաձայնվելու դեպքում, որի ծառայության վճարը վճարում է տվյալ փորձաքննության իրականացման կազմակերպողը:

7.4.1. Ապահովագրողն իրավունք ունի չհամաձայնվել Ապահովադրի (Շահառուի) կամ Լիազորված վարորդի կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի կողմից լիազորված անձի կողմից ներկայացված փորձաքննության եզրակացության հետ և կարող է իրականացնել լրացուցիչ փորձաքննություն, որի ծառայության վճարը վճարում է Ապահովագրողը:

7.5. ԱՄ-ի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գծով պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը/Տուժողը/Տուժողի իրավահաջորդը կամ վերջիններիս կողմից լիազորված համապատասխան անձինք Ապահովագրողին ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) համապատասխան իրավասու մարմիններից (ՀՀ Ոստիկանությունից, ՀՀ Ոստիկանության ՃՈ մարմիններից, ՀՀ ԱԻՆ-ի Հայաստանի փրկարար ծառայությունից և այլն) ապահովագրական պատահարի փաստը հաստատող փաստաթղթեր,

բ) Տուժողի ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի) և ապահովագրական պատահար տեղի ունենալու պահին ԱՄ-ն վարող անձի վարորդական իրավունքի բնօրինակները,

գ) Տուժողի իրավահաջորդությունը հիմնավորող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր, եթե Ապահովագրողին դիմել է Տուժողի իրավահաջորդը,

դ) ներկայացուցչի միջոցով դիմում ներկայացվելու դեպքում՝ լիազորված լինելու փաստը հավաստող նոտարական կարգով վավերացված (ֆիզիկական անձի դեպքում) կամ իրավաբանական անձի կողմից պատշաճ հաստատված փաստաթուղթ (իրավաբանական անձի դեպքում),

ե) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:

7.5.1. Տուժողի առողջությանը պատճառված վնասների հատուցման համար ներկայացվում են՝

ա) դատաբժշկական (բժշկական) փորձաքննության ակտ (եզրակացություն) և/կամ բժշկական տեղեկանք և/կամ կոնսուլտացիոն եզրակացություն և/կամ քաղվածք ամբուլատոր քարտից և/կամ էպիկրիզ,

բ) բժշկական հաստատությունների կողմից տրված վճարման հաշիվներ, իսկ Պայմանների 8.13. ենթակետով նախատեսված դեպքերում՝ կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր,

գ) սույն ենթակետի «ա» և «բ» կետերում նշված փաստաթղթերի բացակայության դեպքում՝ վնասի չափը և Ապահովադրի և/կամ ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր,

դ) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:

7.5.2. Տուժողի գույքին պատճառված վնասների հատուցման պահանջ ներկայացվելու դեպքում ներկայացվում են՝

ա) ԱՄ-ի, ինչպես նաև այլ գույքի վնասման (ոչնչացման) դեպքում՝ վնասվածքի վերականգնման հետևանքով առաջացած ծախսերը հիմնավորող փաստաթղթեր, եթե Ապահովագրողը չի իրականացրել պատահարի արդյունքում վնասված ԱՄ-ի կամ գույքի զննություն՝ պատճառված վնասի չափը ճշտելու նպատակով,

բ) ԱՄ-ի, ինչպես նաև այլ գույքի կորստի դեպքում՝ կորստի փաստը հավաստող փաստաթղթեր,

գ) սույն ենթակետի «ա» և «բ» կետերում նշված փաստաթղթերի բացակայության դեպքում՝ վնասի չափը և Ապահովադրի և/կամ ԱՄ-ն օրինական հիմքով տիրապետող այլ անձի մեղավորությունը հավաստող այլ փաստաթղթեր,

դ) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:

7.6. Վարորդին և ուղևորներին դժբախտ պատահարի հետևանքով պատճառված վնասների դեպքում Ապահովագրողին ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

7.6.1. Մարմնական վնասվածքի, I, II, III խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերման դեպքում՝

ա) Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,

բ) Ապահովագրված անձի անձնագրի բնօրինակը,

գ) համապատասխան իրավասու մարմինների (Լիցենզավորված բժշկական հաստատության, ՀՀ Ոստիկանության և այլն) կողմից տրված փաստաթղթերը, որոնք վկայում են պատահարի առաջացման, առաջացման հանգամանքների մասին և պարունակում են Ապահովագրված անձի ամբողջական ախտորոշումը, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին տեղեկություններ,
դ) բժշկասոցիալական փորձաքննության մարմնի տեղեկանքը հաշմանդամության խումբը (կարգը) սահմանելու մասին,
ե) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկություններ:
7.6.2. Ապահովագրված անձի մահվան դեպքում՝
ա) Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,
բ) մահվան վկայականի բնօրինակը կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված պատճենը,
գ) բժշկական փաստաթուղթ (կամ դրա օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված պատճենը), որտեղ նշված է Ապահովագրված անձի մահվան պատճառը (մահվան վկայականից քաղվածք, դատաբժշկական եզրակացություն և այլն),
դ) օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված ժառանգության իրավունքի վկայականի պատճենը (ներկայացվում է միայն ժառանգի կամ ժառանգների կողմից),
ե) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:
7.6.3. Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր կորուստ՝
ա) Պայմանագրի/Վկայագրի բնօրինակը,
բ) Ապահովագրված անձի անձնագրի բնօրինակը,
գ) անաշխատունակության թերթիկ բուժ հաստատությունից, որտեղ անց է կացվել բուժումը և սահմանված ձևի տեղեկանք՝ ցուցաբերված ամբուլատոր կամ ստացիոնար բուժօգնության վերաբերյալ, որը պարունակում է Ապահովագրված անձի ամբողջական ախտորոշումը, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին տեղեկություններ,
դ) Ապահովագրողի պահանջով այլ լրացուցիչ փաստաթղթեր:
7.7. Եթե սույն Պայմանների 7.1, 7.2, 7.5, 7.6 կետերում նշված փաստաթղթերից որևէ մեկը կցված է քրեական գործին, հատուցում ստանալու պահանջ ներկայացրած անձը պարտավոր է ներկայացնել տվյալ հանգամանքը հաստատող փաստաթուղթ:
7.8. Հատուցում ստանալու պահանջ ներկայացրած անձը պարտավոր է ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում պատահար տեղի ունենալու պահից սկսած 2 (երկու) ամսվա ընթացքում Ապահովագրողին ներկայացնել հայտի կարգավորման համար անհրաժեշտ փաստաթղթերը:
7.8.1. Եթե հատուցում ստանալու պահանջ ներկայացրած անձը փաստաթղթերի ներկայացմանը խոչընդոտող հանգամանքների վերաբերյալ գրավոր միջնորդություն է ներկայացնում կամ դիմում է այլ պատճառաբանությամբ փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետը երկարացնելու համար, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել ևս 2 (երկու) ամսով:
7.8.2. Սահմանված երկամսյա ժամկետը երկարաձգելու մասին միջնորդություն չներկայացնելու դեպքում, Ապահովագրողն Ապահովադրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը՝ փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում:
7.8.3 . Սույն Պայմաններով սահմանված ժամկետում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալու օրվանից հետո՝ 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն ընդունում է որոշում՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև ապահովագրական հատուցում իրականացնելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին:

8. ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

8.1. Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողն իրականացնում է ապահովագրական հատուցում, իսկ հատուցումը մերժելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը պատվիրված նամակով 5 (հինգ) օրվա ընթացքում առաքում է Ապահովադրին (Շահառուին, Ապահովագրված անձին, Տուժողին)՝ նրա՝ Ապահովագրողին հայտնի վերջին հասցեով:
8.2. «Կորուստ» ռիսկի գծով ապահովագրական հատուցման չափը սահմանվում է՝ ելնելով ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի իրական (շուկայական) արժեքից (հաշվի առնելով մաշվածությունը)՝ նվազեցնելով Պայմանագրում/Վկայագրում սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարը: Ոչ պայմանական չհատուցվող գումարը ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի կորստի դեպքում կազմում է յուրաքանչյուր ԱՄ-ի գծով սահմանված ապահովագրական գումարի 10%-ը (տասը տոկոսը) (5%-ը (հինգ տոկոսը) հակաառևանգման սարքավորման առկայության դեպքում), եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
8.3. ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի **«Կորուստ»** ռիսկի գծով ապահովագրական հատուցումը վճարվում է Ապահովագրողի և Ապահովադրի միջև համաձայնություն կնքելուց հետո, որտեղ նշվում է Ապահովադրի պարտավորությունն ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի հայտնաբերման դեպքում Ապահովագրողին անմիջապես տեղեկացնելու և 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում ստացված ապահովագրական հատուցումը հետ վերադարձնելու մասին:
Այն դեպքում, երբ գողացված/փախցված/ կողոպտված/ավազակությամբ հափշտակված ԱՄ-ն և/կամ ԼՍ-ն հայտնաբերվել է մինչև **«Կորուստ»** ռիսկի գծով ապահովագրական հատուցման վճարումը, ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին պատճառված վնասը դիտարկվում է որպես երրորդ անձանց հակաիրավական գործողություն:
8.4. «Ֆիզիկական վնաս» ռիսկից ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացման դեպքում ապահովագրական հատուցման չափը սահմանվում է՝ ելնելով ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի իրական (շուկայական) արժեքից (հաշվի առնելով մաշվածությունը) ՝ նվազեցնելով ստորև բերված տարրերը հետևյալ հերթականությամբ՝

ա) Պայմանագրում/Վկայագրում սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարը,
բ) պիտանի մնացորդների արժեքը լրիվ կառուցվածքային ոչնչացման դեպքում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
8.5. Եթե ԱՄ-ն և/կամ ԼՍ-ն ապահովագրված է ոչ լրիվ արժեքով, ապահովագրական գումարից նվազեցվող ԱՄ-ի պիտանի մնացորդների արժեքը սահմանվում է Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի ապահովագրական գումարի և իրական (ապահովագրական) արժեքի հարաբերությանը համամասնորեն:
8.5.1. ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի լրիվ կառուցվածքային ոչնչացման դեպքում Ապահովագրողի համաձայնությամբ հնարավոր է ապահովագրական հատուցման չափը չնվազեցնել ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի պիտանի մնացորդների արժեքի չափով՝ դրանք Ապահովագրողին փոխանցելու պայմանով: Այս դեպքում նախքան Ապահովագրողին ԱՄ-ի պիտանի մնացորդների փոխանցումը այն պետք է Ապահովադրի կողմից հանվի հաշվառումից ՃՈ մարմիններում կամ իրականացվեն պատշաճ մաքսային ձևակերպումներ, որոնց գծով ծախսերը կրում է Ապահովադիրը (Շահառուն):
8.6. «Ֆիզիկական վնաս» ռիսկից ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի վնասման դեպքում հատուցման ենթակա են հետևյալ ծախսերը՝
ա) վերանորոգման ծախսերը, որոնք ներառում են վերանորոգման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նյութերի արժեքը, վնասված և փոխարինման ենթակա պահեստամասերի արժեքը, վերանորոգման աշխատանքների արժեքը:
Ընդ որում՝ վնասված և փոխարինման ենթակա պահեստամասերի արժեքը որոշելիս՝

- դրանք նախկինում օգտագործված պահեստամասերով փոխարինելու դեպքում ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի մաշվածությունը շահագործման տարիների ընթացքում հաշվի չի առնվում և հատուցման ենթակա գումարից չի նվազեցվում,
- դրանք գործարանային կամ ոչ գործարանային արտադրության նոր պահեստամասերով փոխարինելու դեպքում հատուցման ենթակա գումարից նվազեցվում է ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի պահեստամասերի մաշվածությունը շահագործման տարիների ընթացքում՝ համաձայն ստորև բերված աղյուսակի՝

Աղյուսակ 1

ԱՄ/ԼՍ շահագործման տարիների քանակ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15 եւ ավելի
Մաշվածության տոկոս	0	0	0	10	20	30	40	45	50	55	60	65	70	75	80

Վնասված և փոխարինման ենթակա պահեստամասերը ոչ գործարանային արտադրության նոր պահեստամասերով Ապահովագրողի համաձայնությամբ փոխարինելու դեպքում հատուցման ենթակա գումարից կարող է չնվազեցվել ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի պահեստամասերի մաշվածությունը շահագործման տարիների ընթացքում:
բ) ապահովագրված ԱՄ-ի՝ վթարի (ներառյալ՝ ՃՏՊ-ի) վայրից մինչև ավտոտեխսպասարկման կետը տեղափոխման (էվակուացիոն) ծախսերը, եթե ԱՄ-ն ինքնուրույն չի տեղաշարժվում:
8.7. «Ֆիզիկական վնաս» ռիսկի գծով վնասի չափը սահմանվում է՝
ա) Ապահովագրողի կամ համապատասխան իրավասու մարմնի կողմից կազմված վերանորոգման, վերականգնման արժեքի հաշվարկների հիման վրա,
բ) ապահովագրված ԱՄ-ի փաստացի կատարված վերանորոգման դիմաց վերանորոգող կազմակերպության, ավտոտեխսպասարկման կետի հաշիվների հիման վրա, որտեղ Ապահովադրին (Շահառուին) ուղղորդել է Ապահովագրողը: Վերանորոգման ծախսերը հատուցվում են վերանորոգման և դրա համար կատարված վճարման փաստը հավաստող փաստաթղթերի բնօրինակների ներկայացման դեպքում:
Վնասի չափը կարող է սահմանվել նաև Ապահովագրողի կողմից կազմված վերականգնման, վերանորոգման արժեքն արտացոլող Վնասի ակտի հիման վրա:
8.8. Վերականգնման, վերանորոգման արժեքի հաշվարկը սահմանվում է՝ ելնելով ՀՀ-ում վերանորոգման աշխատանքների գներից, որոնք պետք է համապատասխանեն տվյալ շուկայում ձևավորված նմանատիպ վերանորոգման աշխատանքների պատշաճ որակով իրականացման համար սովորաբար գանձվող գներին:
8.9. Եթե վնասված ԱՄ-ի վերանորոգման ընթացքում հայտնաբերվել են այնպիսի վնասվածքներ, որոնք Վնասի ակտի կազմման ժամանակ չէին հայտնաբերվել (թաքնված վնասվածքներ/ չհայտնաբերված թերություններ), Ապահովադիրը պարտավոր է մինչև դրանց վերականգնման պահը կասեցնել վերանորոգման աշխատանքները, անմիջապես տեղեկացնել Ապահովագրողին թաքնված վնասվածքների/թերությունների հայտնաբերման մասին՝ Ապահովագրողի կողմից Զննման ակտին հավելում կազմելու համար:
8.9.1. ԱՄ-ի Զննման ակտի հավելման մեջ սահմանվում են թաքնված վնասվածքների/ չհայտնաբերված թերությունների առաջացման պատճառները և դրանց կապն ապահովագրական պատահարի հետ: Եթե հաստատվում է, որ հայտնաբերված թաքնված վնասվածքներն առաջացել են ապահովագրական պատահարի արդյունքում, Ապահովագրողը հատուցում է նաև դրանց վերացման գծով ծախսերը:
8.9.2. Ապահովադրի կողմից 8.9 կետում շարադրված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել Ապահովադրին ապահովագրական հատուցման վճարումը թաքնված վնասվածքների/չհայտնաբերված թերությունների մասով:
8.10. Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետ կապված վնասների նվազեցմանն ու կանխմանն ուղղված փաստաթղթորեն հաստատված ծախսերն Ապահովադրին (Շահառուին) հատուցվում են, եթե դրանք ճանաչվել են անհրաժեշտ կամ կատարվել են Ապահովագրողի ցուցումով:
8.11. Ապահովագրական հատուցման չափը սահմանելիս հաշվի չեն առնվում ԱՄ-ի բացակայող կամ վնասված այն մասերի, ագրեգատների, հանգույցների, ինչպես նաև դրանց տեղադրման արժեքները՝

ա) որոնց բացակայությունը կամ վնասվելը չի գտնվում քննվող ապահովագրական պատահարի հետ պատճառահետևանքային կապի մեջ,
բ) որոնք ֆիքսվել են Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին ԱՄ-ի զննման ժամանակ, մինչև Ապահովադրի կողմից կոմպլեկտավորված կամ վերանորոգված ԱՄ-ն կրկնակի զննման համար Ապահովագրողին ներկայացնելը:
8.12. Վնասի չափի մեջ չեն ներառվում՝
ա) ԱՄ-ի տեխնիկական սպասարկման և երաշխիքային նորոգման արժեքը,
բ) ԱՄ-ի արդիականացման կամ վերասարքավորման հետ կապված աշխատանքների արժեքը,
գ) հանգույցների և ագրեգատների, նորոգման կազմակերպություններում դրանց վերականգնման համար պահեստամասերի կամ մասերի բացակայության պատճառով նորոգման փոխարեն դրանց ամբողջական փոխարինման արժեքը,
դ) ԱՄ-ի նորոգման կամ մաշվածության արդյունքում դրա առանձին մասերի և դետալների, դրանց փոփոխման հետ կապված աշխատանքների արժեքը:
8.13. ԱՄ-ի օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում վնասի չափը սահմանելու համար՝
ա) Տուժողի ԱՄ-ի վնասման դեպքում Ապահովագրողը, հիմք ընդունելով Ապահովադրից (Տուժողից) ստացված փաստաթղթերը՝ համաձայն 7.5 կետի, նշանակում է փորձաքննություն՝ իր վրա վերցնելով դրա հետ կապված ծախսերը,
բ) Տուժողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի դեպքում հատուցումը կատարվում է Տուժողի կողմից սույն Պայմանների 7.5 կետի «գ» մասում նշված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում: Տուժողի առողջությանը պատճառված վնասի համար ապահովագրական հատուցումը վճարվում է անմիջապես բժշկական հաստատությանը՝ բացառությամբ հետևյալ ծախսերի գծով հատուցումների դեպքերի.
1) բժշկի ցուցումով բուժման շարունակականության ապահովմանն ուղղված միջոցառումների, դեղեր ձեռք բերելու, պրոթեզավորման, անվասայլակի, տեխնիկական այլ միջոցների ձեռքբերման հետ կապված ծախսերը,
2) Տուժողի առողջության վերականգնման համար Տուժողի կամ այլ անձի կողմից արդեն իսկ կատարված ծախսերը, եթե Տուժողը կամ վճարումն իրականացնող անձը հիմնավորում են իրենց կողմից վճարման իրականացման անհրաժեշտությունը:
Եթե Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահարի արդյունքում հատուցել են Տուժողի վնասները, ապա Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում կատարելու իր պարտականությունից:
8.14. ԱՄ-ի վերականգնումից (նորոգումից) հետո 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովադիրը (Տուժողը) պարտավոր է ԱՄ-ն ներկայացնել Ապահովագրողի զննմանը: Սույն պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, հետագայում տեղի ունեցած պատահարի հետևանքով պատճառված վնասի հատուցման չափը սահմանելիս, հաշվի չեն առնվի ԱՄ-ի բացակայող կամ վնասված այն մասերի, դետալների, ագրեգատների, հագույցների ինչպես նաև դրանց վերանորոգման, փոխարինման, տեղադրման աշխատանքների արժեքները, որոնք արձանագրվել են նախկինում ներկայացված հայտով զննման ընթացքում:
8.15. Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել մինչև հերթական ապահովագրավճարի վճարումը, որը կետանցվել է, ապա Ապահովագրողն իրավունք ունի վճարման ենթակա ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցելու կետանցված ապահովագրավճարի գումարը:
8.16. Ապահովագրողի համաձայնությամբ համապատասխան իրավասու մարմիններից փաստաթղթերի ներկայացումը չի պահանջվում հետևյալ մասերի, դետալների վնասման դեպքում՝
- ԱՄ-ի թափքի 2-ից (երկուսից) ոչ ավել մասերի՝ տարին մեկ անգամ, մեկական ապահովագրական պատահարով,
- ԱՄ-ի ապակիների և արտաքին լուսավորման սարքերի՝ տարին մեկ անգամ, մեկական ապահովագրական պատահարով:

8.17. Առանց իրավասու մարմիններից փաստաթղթերի ներկայացման վնասի հատուցման դեպքում չեն հատուցվում նորոգման ընթացքում հայտնաբերված թերությունները և վնասվածքները:
8.18. Դժբախտ պատահարի հետևանքով ԱՄ-ի վարորդին և/կամ ուղևորներին պատճառված վնասի չափը սահմանվում է՝
8.18.1. Ապահովագրված անձի հաշմանդամության խումբը (կարգը) հաստատելու կամ մահվան դեպքում ապահովագրական գումարի՝
- 100%-ի (հարյուր տոկոսի) չափով՝ հաշմանդամության I խումբ, «հաշմանդամ երեխա» կարգավիճակ սահմանելու դեպքում,
- 70%-ի (յութանասուն տոկոսի) չափով՝ հաշմանդամության II խումբ սահմանելու դեպքում,
- 40%-ի (քառասուն տոկոսի) չափով՝ հաշմանդամության III խումբ սահմանելու դեպքում,
- 100%-ի (հարյուր տոկոսի) չափով՝ մահվան դեպքում:

8.18.2. աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում վնասի չափը սահմանվում է բժշկական հաստատությունից ներկայացված փաստաթղթի հիման վրա, որում նշված են ապահովագրական պատահարի հետևանքով Ապահովագրված անձին պատճառված մարմնական վնասվածքի բնույթը, հետազոտության արդյունքները և կատարված բժշկական ծախսերի չափը: Աշխատունակության ժամանակավոր կորստի դեպքում ապահովագրական հատուցման առավելագույն չափը սահմանվում է ապահովագրական գումարի 0.4 %-ի (չորս տասնորդական տոկոսի) չափով բուժման յուրաքանչյուր օրվա համար: Բուժման առավելագույն ժամկետը, որի համար կատարվում է ապահովագրական հատուցում, կազմում է 90 (իննսուն) օր:
8.19. Ապահովագրողն ապահովագրական հատուցումը կարող է կատարել ինչպես կանխիկ եղանակով, այնպես էլ Ապահովադրի (Շահառուի) հաշվեհամարին փոխանցում կատարելով:
8.20. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ՝ ապահովագրական պատահար տեղի ունենալու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով, սակայն Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքի 10% (տասը տոկոս) շեղման սահմաններում:

8.21. Եթե ապահովագրական պատահարի արդյունքում սույն Պայմանների համաձայն Ապահովագրողի կողմից հատուցման ենթակա վնասը ենթակա է հատուցման նաև ԱՄ-ի օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության պայմանագրի ներքո, ապա ապահովագրական հատուցումն առաջին հերթին իրականացվում է համապատասխան ապահովագրական ընկերության կամ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ընկերությունների բյուրո» ԻԱՄ-ի (այսուհետ՝ Բյուրո) կողմից՝ համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի, իսկ Ապահովադրի, Ապահովագրված անձի և/կամ Տուժողի փաստացի կրած վնասները համապատասխան ապահովագրական ընկերությունների կամ Բյուրոյի կողմից հատուցման ենթակա գումարները գերազանցելու դեպքում տարբերությունը հատուցում է Ապահովագրողը Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում:
8.22. Պայմանագրի/Վկայագրի գծով բոլոր ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումների ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ապահովագրական գումարի չափը:
8.23. Ապահովագրական գումարն ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է հատուցման գումարի չափով, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ կամ Ապահովադիրն ապահովագրական հատուցում ստանալուց հետո չի վերականգնել այն:
8.24. Եթե ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին և/կամ ԱՄ-ի օգտագործման ընթացքում վարորդին և/կամ ուղևորներին և/կամ Ապահովադրի և/կամ Լիազորված վարորդի կողմից վթարի արդյունքում երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատճառված վնասն առաջացել է հաջորդական դեպքերի արդյունքում, և դրա սկզբնական և գլխավոր պատճառ հանդիսացող դեպքն ապահովագրված է եղել Պայմանագրով/Վկայագրով սույն Պայմանների 3.1. կետում նշված ռիսկերից, ապա այն ենթակա է հատուցման՝ անկախ մնացած դեպքերի ապահովագրված լինելու հանգամանքից:

9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

9.1. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝
ա) Ապահովադիրը (Շահառուն) և/կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց հետո և վերջիններիս հայտնի դառնալու պահից անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում) այդ մասին չի տեղեկացրել համապատասխան իրավասու մարմիններին (ՀՀ Ոստիկանությանը, ՀՀ Ոստիկանության ՃՈ մարմիններին, ՀՀ ԱԻՆ-ի Հայաստանի փրկարար ծառայությանը և այլն),
բ) Ապահովադիրը (Շահառուն) և/կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց հետո և վերջիններիս հայտնի դառնալու պահից անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում) տեղի ունեցած պատահարի մասին չի տեղեկացրել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին,
գ) ապահովագրված ԱՄ-ի վարորդը դիմել է փախուստի կամ ինքնակամ հեռացել է պատահարի վայրից և/կամ ԱՄ-ն պատահարի վայրից ինքնակամ տեղաշարժել է՝ առանց դրա անհրաժեշտության,
դ) պատահարն առաջացել է Ապահովադրի (Շահառուի) կամ Լիազորված վարորդի, ապահովագրված ԱՄ-ի ուղևորների դիտավորյալ գործողությունների արդյունքում, որոնք ուղղված են եղել ապահովագրական պատահարի առաջացմանը, ինչպես նաև վերոհիշյալ անձանց կողմից հանցագործություն կամ հանցագործության փորձ կատարելու արդյունքում,
ե) ԱՄ-ն բեռնավորվել, բեռնաթափվել կամ փոխադրվել է ցանկացած տեսակի փոխադրամիջոցով (բացառությամբ՝ ապահովագրված ԱՄ-ն ճանապարհային երթևեկության կանոնների պահպանմամբ քարշակելու դեպքի),
զ) Ապահովադիրը և/կամ Լիազորված վարորդը և/կամ Շահառուն և/կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի կողմից լիազորված անձը սահմանված ժամկետում ԱՄ-ն չի ներկայացրել փորձաքննության և/կամ հնարավորություն չի ընձեռել Ապահովագրողին անցկացնելու փորձաքննություն և/կամ վնասված ԱՄ-ի վրա կատարել է կառուցվածքային փոփոխություններ (փոխել, վերանորոգել է վնասված հանգույցները և դետալները առանց Ապահովագրողի հետ գրավոր համաձայնեցնելու),
է) Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/ Լիազորված վարորդի կողմից լիազորված անձը սույն Պայմաններով սահմանված ժամկետում չի ներկայացրել Ապահովագրողին անհրաժեշտ փաստաթղթերը՝ հատուցում կատարելու մասին որոշում կայացնելու համար կամ ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, որոնք հակասում են իր կողմից Ապահովագրողին ներկայացրած հայտային գրավոր դիմումին,
ը) Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի կողմից լիազորված անձն Ապահովագրողին պատահարի վերաբերյալ հայտնել է անարժանահավատ, կեղծ տեղեկություններ և/կամ օգտագործել է կեղծ միջոցներ՝ ապահովագրական հատուցում ստանալու համար,
թ) ԱՄ-ն ապահովագրական պատահարից առաջ շահագործվել է անսարք վիճակում, ունեցել է թերություններ, որոնց պատճառով տեղի է ունեցել պատահարը,
ժ) պատահարը տեղի է ունեցել միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետևանքով,
ի) պատահարը տեղի է ունեցել ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների հետևանքով,
լ) պատահարը տեղի է ունեցել քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, ահաբեկչական գործողությունների, գործադուլների հետևանքով,
խ) պատահարը տեղի է ունեցել այն գոտիներում, որտեղ պաշտոնապես հայտարարված է արտակարգ իրավիճակ,
ծ) պատահարը տեղի է ունեցել պետական մարմինների կարգադրությամբ ապահովագրված ԱՄ-ի առգրավման, բռնագրավման, ռեկվիզիցիայի, դրա վրա արգելանք դնելու, ոչնչացման կամ վնասման հետևանքով,
կ) պատահարը տեղի է ունեցել շորթման, խարդախության արդյունքում,
հ) սույն Պայմանների 7.1 կետի «բ» և «դ» մասերում նշված փաստաթղթերը և/կամ իրերը մնացել են գողացված ԱՄ-ում և Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի

կողմից լիազորված անձն Ապահովագրողին չի ներկայացնում ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող, իրավասու մարմնի կողմից տրված տեղեկանք,

ձ) Ապահովադիրը Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս կամ դրա գործողության ընթացքում հայտնել է կեղծ տեղեկություններ,

ղ) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում չի ձեռնարկել բոլոր հնարավոր ողջամիտ և տվյալ պայմաններում հասանելի միջոցներն ԱՄ-ի հետագա վնասումը կանխելու և վնասի չափը նվազեցնելու համար,

ճ) Ապահովադիրը (Շահառուն) վնասի պատճառման համար մեղավոր անձի կամ ապահովագրական ընկերության կողմից, որտեղ ապահովագրված է մեղավորի քաղաքացիական պատասխանատվությունը, հատուցում է ստացել,

մ) իրավասու մարմնի կողմից չի հաստատվել պատահարի ի հայտ գալու փաստը,

յ) Ապահովադիրը (Շահառուն) կամ Լիազորված վարորդը կամ Ապահովադրի (Շահառուի)/Լիազորված վարորդի կողմից լիազորված անձը խոչընդոտել է պատահարի պատճառների բացահայտմանը և վնասի չափի որոշմանը,

ն) Ապահովադիրն ապահովագրված ԱՄ-ի գողությունից, կողոպուտից, ավազակությունից կամ փախցնումից հետո Ապահովագրողին չի տրամադրել ապահովագրված ԱՄ-ի բանալիների օրիգինալ կոմպլեկտը և գրանցման փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (կամ դրանց փոխարինող փաստաթղթերը), բացառությամբ այն դեպքերի, երբ.

- Ապահովադիրը նախօրոք՝ մինչև ապահովագրական պատահարի ի հայտ գալը, գրավոր տեղեկացրել է Ապահովագրողին ապահովագրված ԱՄ բանալիների, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի (կամ դրանց փոխարինող փաստաթղթերի) կորստի մասին,
- ապահովագրված ԱՄ-ի բանալիները, տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիրը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականը (կամ դրանց փոխարինող փաստաթղթերը), հափշտակվել են ավազակության կամ կողոպուտի արդյունքում,

շ) Ապահովագրված ԱՄ-ի վարորդը ուղեխցիկում չգտնվելու պարագայում, ԱՄ դռները կամ պատուհանները բաց է թողել (չի կողպել) կանգառի ժամանակ,

ո) Ապահովադիրը (Լիազորված վարորդը) չի կատարել սույն Պայմաններով նախատեսված և/կամ Պայմանագրում/Վկայագրում նշված իր պարտականությունները,

չ) Պայմանագրով/Վկայագրով նախատեսված են մերժման այլ հիմքեր:

9.2. Համաձայն սույն Պայմանների՝ չեն հատուցվում հետևյալի արդյունքում առաջացած վնասները՝

ա) վերանորոգումից հետո ԱՄ-ի ապրանքային, շուկայական արժեքի կորուստ կամ նվազում,

բ) ԱՄ-ի անվադողերի, անվասկավառակների և դրանց ծածկոցների վնասում, եթե այն չի զուգորդվում այլ վնասների հետ,

գ) ԱՄ-ում գազի սարքավորման (բալոն և այլն) պայթյունը,

դ) ԱՄ-ի այն դետալների, հանգույցների վերանորոգումը կամ նորով փոխարինումը, որոնք վնասված, ջարդված են եղել մինչև պատահարի տեղի ունենալը: Եթե պատահարի արդյունքում արդեն իսկ վնասված դետալները, հանգույցները էլ ավելի են վնասվել, Ապահովագրողը հատուցում է միայն պատահարի հետևանքով առաջացած վնասի վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի և մինչև ապահովագրական պատահարի տեղի ունենալն առկա վնասի վերականգնման համար անհրաժեշտ ծախսերի դրական տարբերության չափով,

ե) վարորդով, ուղևորներով և բեռով բեռնված, լրակազմված ու լիցքավորված ԱՄ-ի զանգվածը արտադրող կազմակերպության կողմից սահմանված առավելագույն թույլատրելի զանգվածը գերազանցելու,

զ) ԱՄ-ի շարժիչը տաքացնելու համար բաց կրակի աղբյուրների օգտագործում,

է) ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի գործարանային խոտանի կամ նորոգման ժամանակ կատարված խոտանի,

ը) ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի բնական մաշվածություն շահագործման արդյունքում,

թ) ԱՄ և/կամ ԼՍ շահագործման ժամանակ դրանց արտադրող գործարանի կողմից նախատեսված շահագործման կանոնների խախտման,

ժ) ԱՄ-ի օգտագործման/շահագործման ժամանակ հակահրդեհային անվտանգության կանոնները խախտելու,

ի) ապահովագրված ԱՄ-ն շահագործվել է Պայմանագրում/Վկայագրում որպես Լիազորված վարորդ չնշված անձի կողմից կամ օրինական հիմքերի բացակայության պայմաններում (վարորդը զրկված է վարելու իրավունքից, չի ունեցել ապահովագրված ԱՄ-ն վարելու իրավունք կամ ուղեգիր կամ վարորդական իրավունք կամ ԱՄ-ն վարելու համար օրենսդրությամբ պահանջվող այլ փաստաթուղթ կամ ԱՄ-ի շահագործումն արգելված է ՀՀ օրենսդրությամբ),

լ) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը ԱՄ-ն վարելիս գտնվել է ոչ սթափ վիճակում և/կամ հրաժարվել է ալկոհոլային զննում անցնելուց,

խ) պատահարը տեղի է ունեցել Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրության տարածքից դուրս,

ծ) ապահովագրված ԱՄ-ն օգտագործվել է մրցույթներում, փորձարկումներում, ուսումնական նկատառումներով, տրամադրվել է վարձակալության, օգտագործվել է որոշակի վճարի դիմաց ուղևորներ տեղափոխելու նպատակով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

կ) ՃԵԿ-ի կանոններով սահմանված տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկով նախատեսված անսարքություններով և պայմաններով ԱՄ-ն վարելու,

հ) ԱՄ-ն +7 °C օդի ջերմաստիճանից ցածր օդի ջերմաստիճանի պայմաններում ձմեռայինից տարբեր անվադողերով օգտագործելու,

ձ) +7 °C օդի ջերմաստիճանից ցածր օդի ջերմաստիճանի պայմաններում ԱՄ-ի ձմեռային անվադողերի պահպանաշերտի նախշանկարի մնացորդային բարձրությունը 4մմ-ից պակաս լինելու պարագայում ԱՄ-ն օգտագործելու:

9.3. Հատուցման ենթակա չեն.

ա) ապահովագրական պատահարի ժամանակ ԱՄ-ում գտնվող իրերին կամ սարքավորումներին պատճառված վնասը, որոնց ապահովագրությունը նախատեսված չէ ապահովագրության Պայմանագրով/Վկայագրով,

բ) այն վնասների և դեֆեկտների վերացման ծախսերը, որոնց մասին մինչև ապահովագրական պատահարի առաջանալն Ապահովագրողին չէին տեղեկացրել,
գ) մինչև ապահովագրված ԱՄ-ն ապահովագրելը դրանում առաջացած վնասվածքների և թերությունների վերացման ծախսերը,
դ) ԱՄ-ի ժամանակավոր փոխարինման ծախսերը,
ե) ապահովագրված ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին պատճառված վնասը կամ դրա ոչնչացումը, ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի գողությունը, կողոպուտը, ավազակությունը կամ փախցնումը, եթե Ապահովադիրը չի կատարել ապահովագրական ռիսկը նվազեցնելու կամ ապահովագրական ռիսկի մեծացումը կանխելու իր պարտականությունը, որը հանգեցրել է ապահովագրական պատահարի առաջացմանը,
զ) վնասը, որը պատճառվել է վարորդի և/կամ ուղևորների գույքին, որը գտնվել է ԱՄ-ում ապահովագրական պատահար տեղի ունենալու ժամանակ,
է) ԱՄ-ին և/կամ Լիազորված վարորդին՝ Ապահովագրված անձի կողմից պատճառված վնասը,
ը) վնասը, որը պատճառվել է երրորդ անձանց անօրինական գործողությունների հետևանքով Ապահովադրի (Ապահովագրված անձի) կառավարումից դուրս հայտնված ԱՄ-ի կողմից,
թ) ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին պատճառված վնասը, եթե ԱՄ-ն և/կամ ԼՍ-ն Ապահովադրի կողմից հանձնվել են վերանորոգման՝ առանց Ապահովագրողի նախնական գրավոր համաձայնության և վնասի չափի հետ Ապահովագրողը համաձայն չէ,
ժ) ԱՄ-ի տեխնոլոգիական կամ տեխնիկական անհրաժեշտությունից չբխող աշխատանքների (չվնասված մակերեսների ներկում, վերանորոգման փոխարեն պահեստամասերի փոխարինում և այլն) իրականացման գծով ծախսերը,
ի) բարոյական վնասը, բաց թողնված օգուտը, պարապուրդը, եկամտի կորուստը, Ապահովադրի (Լիազորված վարորդի) և Շահառուի այլ անուղղակի և առևտրային կորուստները, վնասները և ծախսերը, օրինակ՝ տուգանքներ, ապահովագրական պատահարի կարգավորման ընթացքում հյուրանոցում բնակվելը, գործուղման ծախսերը, հեռախոսային խոսակցությունները, ապրանքների մատակարարման և ծառայությունների տրամադրման ժամկետների խախտման հետ կապված կորուստները և այլն,
լ) Ապահովադրի աշխատակիցներին պատճառված վնասը (եթե Ապահովադիրը հանդիսանում է իրավաբանական անձ) և/կամ նրանց կողմից ծառայողական պարտականությունների կատարման նպատակով օգտագործվող գույքին պատճառված վնասը,
խ) Ապահովադրի ընտանիքի անդամներին, խնամակալներին, ինչպես նաև այն քաղաքացիներին և/կամ նրանց գույքին պատճառված վնասը, ովքեր Ապահովադրի հետ վարում են համատեղ տնտեսություն (եթե Ապահովադիրը հանդիսանում է ֆիզիկական անձ)՝ բացառությամբ վարորդի և ուղևորների դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքի,
ծ) շրջակա միջավայրին պատճառված վնասը,
կ) հնաոճ և այլ յուրօրինակ առարկաներին, պատմամշակութային նշանակության շենքերին և կառույցներին, թանկարժեք մետաղներից և թանկարժեք, կիսաթանկարժեք քարերից պատրաստված իրերին, կանխիկ դրամին, արժեթղթերին, կրոնական պաշտամունքի առարկաներին, ինչպես նաև գիտության, գրականության և արվեստի ստեղծագործություններին, այլ ինտելեկտուալ սեփականության օբյեկտներին պատճառված վնասը կամ դրանց ոչնչացումը,
հ) երկրաշարժի հետևանքով ապահովագրության օբյեկտին պատճառված վնասը:
9.4. Սույն Պայմանների 9.1. կետում նշված դրույթները կամ դրանցից ցանկացածը կարող է չկիրառվել, եթե Պայմանագրում/Վկայագրում այդ մասին առկա է հատուկ նշում:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ/ՎԿԱՅԱԳԻՐԸ

10.1. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է գրավոր Ապահովադրի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա: Սույն Պայմաններով նախատեսված Պայմանագրի/Վկայագրի ձևը տիպային է, սակայն անհրաժեշտության դեպքում Ապահովագրողն իրավունք ունի դրանում փոփոխություններ և լրացումներ կատարել՝ համաձայն սույն Պայմանների և ՀՀ օրենսդրության:
10.2. Պայմանագիր/Վկայագիր կնքելու համար Ապահովադիրն Ապահովագրողին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերի բնօրինակները՝
ա) անձնագիր կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող այլ փաստաթղթեր (եթե Ապահովադիրը հանդիսանում է ֆիզիկական անձ) կամ պետական գրանցման վկայական (եթե Ապահովադիրը հանդիսանում է իրավաբանական անձ),
բ) ԱՄ-ի տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագիր և ԱՄ-ի տիրապետման, օգտագործման, տնօրինման իրավունքը հաստատող այլ փաստաթղթեր (տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, նոտարական վավերացումով լիազորագիր, վարձակալության պայմանագիր և այլն),
գ) առկայության դեպքում՝ անկախ փորձագետի կողմից տրամադրված ԱՄ-ի արժեքի գնահատման եզրակացությունն և ԼՍ-ի արժեքը հաստատող փաստաթղթեր,
դ) Ապահովագրողի պահանջով այլ փաստաթղթեր:
10.3. Ապահովադիրը պատասխանատու է Ապահովագրողին տրամադրված տվյալների արժանահավատության համար: Եթե Ապահովադիրը սուտ, կեղծ կամ ապակողմնորոշող տեղեկություններ է հայտնել ապահովագրության օբյեկտի մասին, ապա ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման իրականացումը և պահանջել, որ Պայմանագիրը/Վկայագիրը ճանաչվի անվավեր:
10.4. Պայմանագիրը/Վկայագիրն ուժի մեջ է մտնում Պայմանագրի/Վկայագրի կնքման պահից, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի/Վկայագրի գործողությունն ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում որպես ապահովագրության գործողության ավարտի ամսաթիվ նշված ամսաթվի ժամը 23:59-ին, եթե Պայմանագրով/Վկայագրով կամ այլ հանգամանքներով, որոնց տեղի ունենալու դեպքում նախատեսված

է ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվից շուտ Պայմանագրի/Վկայագրի դադարեցում, այլ բան նախատեսված չէ:
10.5. Պայմանագիր/Վկայագիր կնքելիս՝ Ապահովադիրն Ապահովագրողի պահանջով պարտավոր է տրամադրել ԱՄ-ն՝ զննման:
10.6. Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարում է մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի, որով այն կնքվել էր, ավարտի ամսաթիվը հետևյալ դեպքերում.
10.6.1. Ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ապահովագրավճարը կամ ապահովագրավճարի հերթական մասը չվճարելու դեպքում՝ չվճարված ապահովագրության ժամանակահատվածի (ժամկետի) սկզբի ամսաթվից, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
10.6.2. Եթե Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական պատահար տեղի ունենալու հնարավորությունը և ապահովագրական ռիսկի առկայությունը դադարել են ապահովագրական պատահարից տարբեր հանգամանքների բերումով, մասնավորապես.
ա) ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի ոչնչացումն ապահովագրական պատահարից տարբեր պատճառներով՝ ոչնչացման (կորստի) պահից,
բ) Ապահովադրի մահը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրված ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի նկատմամբ իրավունքները փոխանցվում են այլ անձին, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:
10.6.3. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Ապահովագրողի լուծարման դեպքում,
10.6.4. Ապահովագրողի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում՝ Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրական գումարի ամբողջ չափով ապահովագրական հատուցում իրականացնելու դեպքում,
10.6.5. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, այդ թվում՝ դատարանի որոշմամբ:
10.7. Պայմանագիրը/Վկայագիրը կարող է լուծվել հետևյալ դեպքերում.
10.7.1. կողմերի համաձայնությամբ,
10.7.2. Ապահովադրի պահանջով,
10.7.3. Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի/Պայմանների դրույթների խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ,
10.7.4. Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի/Պայմանների դրույթների խախտման համար Ապահովադրի նախաձեռնությամբ,
10.7.5. Պայմանագրով/Վկայագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
10.8. Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մտադրության մասին կողմերը պարտավոր են ծանուցել միմյանց ոչ պակաս, քան Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման ենթադրվող ամսաթվից 15 (տասնհինգ) օր առաջ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
10.9. Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս, ինչպես նաև գործողության ընթացքում Պայմանագրի/Վկայագրի դրույթները կարող են փոփոխվել և/կամ լրացվել կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով: Պայմանագրի/Վկայագրի ցանկացած փոփոխություններ և լրացումներ համարվում են կատարված, եթե դրանք ձևակերպված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԿԱՐԳԸ

11.1. Ապահովագրական գումարը չի կարող գերազանցել ԱՄ-ի իրական կամ շուկայական արժեքը (ապահովագրական արժեքը) Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ:
11.2. ԱՄ-ի ապահովագրական արժեքը սահմանվում է Ապահովագրողի կողմից հետևյալի հիման վրա՝
ա) նոր ԱՄ-ի գնի՝ սահմանված պաշտոնական դիլերների կողմից՝ Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ,
բ) առևտրային կազմակերպության կողմից տրված հաշիվ-ապրանքագրի կամ ԱՄ-ի առք ու վաճառքի պայմանագրի (ԱՄ-ի սկզբնական գնման դեպքում), ԱՄ-ի մաքսային փաստաթղթերի,
գ) Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ԱՄ-ի շուկայական արժեքի: ԱՄ-ի շուկայական արժեքը սահմանվում է մասնագիտացված հրատարակություններում տպագրված տվյալների հիման վրա,
դ) իրավասու կազմակերպության կողմից գնահատված շուկայական արժեքի:
11.3. Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովագրողն իրավունք ունի ուսումնասիրելու և զննելու ապահովագրության օբյեկտը:
11.4. ԼՍ-ի ապահովագրության դեպքում ապահովագրական արժեքը սահմանվում է ԼՍ-ի և դրանց տեղադրման արժեքը հաստատող փաստաթղթերի (անդորրագրերի, հաշիվների և այլնի) հիման վրա: Նման փաստաթղթերի բացակայության դեպքում ԼՍ-ի ապահովագրական արժեքը որոշվում է կողմերի համաձայնությամբ:
11.5. Կողմերի համաձայնությամբ ապահովագրական գումարը սահմանվում է ՀՀ դրամով, իսկ ոչ ռեզիդենտների համար կարող է սահմանվել ինչպես ՀՀ դրամով, այնպես էլ արտարժույթով՝ Պայմանագրի/Վկայագրի կնքման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով:
11.6. Ապահովադիրն իրավունք ունի վերականգնելու ապահովագրական հատուցումից հետո նվազած ապահովագրական գումարը՝ սույն Պայմանների համաձայն Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտին մնացած ժամկետի համար՝ կնքելով լրացուցիչ համաձայնագիր և վճարելով համապատասխան ժամանակահատվածի համար հաշվարկված լրացուցիչ ապահովագրավճար:
11.7. ԱՄ-ի ոչ լրիվ արժեքով ապահովագրություն:
Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել ապահովագրական գումար, որի մեծությունը պակաս է ապահովագրական արժեքից (ոչ լրիվ արժեքով ապահովագրություն): Այս դեպքում «Կորուստ» կամ «Ֆիզիկական վնաս» ռիսկերի գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումը հաշվարկվում է ապահովագրական գումարի և ապահովագրական արժեքի հարաբերությանը համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով/Վկայագրով:

11.8. Եթե ԱՄ-ն ապահովագրվել է ոչ լրիվ արժեքով, Ապահովադիրը (Շահառուն) իրավունք ունի իրականացնելու լրացուցիչ ապահովագրություն մեկ այլ ապահովագրական ընկերության մոտ, սակայն բոլոր ապահովագրության պայմանագրերով ապահովագրական գումարները չպետք է գերազանցեն տվյալ ԱՄ-ի ապահովագրական արժեքը:
11.9. Եթե ապահովագրական պատահար տեղի ունենալու պահի դրությամբ ԱՄ-ի գծով գործել են մի քանի Պայմանագրեր/Վկայագրեր, որոնք ծածկում են միևնույն ռիսկերը, ապա ապահովագրական հատուցման գումարի հաշվարկն իրականացվում է Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրական գումարի և Ապահովադրի կողմից կնքված բոլոր պայմանագրերի գծով ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն:

12. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

12.1. Ապահովագրավճարը հաշվարկում է Ապահովագրողն ապահովագրության ամբողջ ժամկետի համար՝ ելնելով Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրական գումարից և ապահովագրական սակագնի չափից:
12.2. Ապահովադիրը կարող է ապահովագրավճարը վճարել կանխիկ դրամով Ապահովագրողի դրամարկղ, Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին կամ անկանխիկ՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելով:
12.3. Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրավճարը վճարվում է Ապահովադրի կողմից միանվագ, ապահովագրության ամբողջ ժամկետի համար, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
12.4. Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:
12.5. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:
12.6. Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում և չափով Ապահովադրի կողմից ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) չվճարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չսահմանել լրացուցիչ ժամկետ ապահովագրավճարի վճարման համար, չծանուցել այդ մասին Ապահովադրին: Ապահովագրավճարի վճարման համար լրացուցիչ ժամկետ չսահմանելու և այդ մասին Ապահովադրին չծանուցելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարել Պայմանագրով/Վկայագրով սահմանված ապահովագրավճարի հերթական մասի վճարման ամսաթիվ հանդիսացող օրվան հաջորդող օրվա 00:00 ժամից հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով առաջացած վնասների դիմաց ապահովագրական հատուցումներ:
12.7. Սույն պայմանների 10.7. կետի 10.7.1. և 10.7.2. ենթակետով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը տվյալ ԱՄ-ի գծով լուծելու դեպքում վերադարձման ենթակա ապահովագրավճարից նվազեցվում են ԱՄ-ի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ընդամենը ապահովագրավճարի 20%-ի (քսան տոկոսի) չափով՝ համաձայն հետևյալ բանաձևի, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ.

ՎԱ = ԸԱ*ՉԺ/ԳԺ – ԸԱ*0.2

ՎԱ՝ վերադարձման ենթակա ապահովագրավճար,
ԸԱ՝ ընդամենը ապահովագրավճար՝ համաձայն Պայմանագրի/Վկայագրի,
ՉԺ՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության չլրացած ժամկետ,
ԳԺ՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետ:

12.8 Սույն պայմանների 10.7. կետի 10.7.4. ենթակետով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում ապահովագրված օբյեկտի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը 20%-ի (քսան տոկոսի) չափով վերադարձման ենթակա ապահովագրավճարից չեն նվազեցվում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
12.9 Ապահովագրողի կողմից վերադարձվող ապահովագրավճարի գումարը կարող է չնվազեցվել ընդամենը ապահովագրավճարի 20%-ի (քսան տոկոսի) չափով, եթե Ապահովադրի նախաձեռնությամբ Պայմանագրի/Վկայագրի դադարեցումը պայմանավորված է՝

- Պայմանագիրը/Վկայագիրն ապահովագրության օբյեկտներից մեկի գծով դադարեցնելու և մեկ այլ համարժեք ապահովագրության օբյեկտով փոխարինելու անհրաժեշտությամբ, կամ
- Պայմանագրի/Վկայագրի որևիցե ապահովագրության օբյեկտի մասով Պայմանագրի/Վկայագրի դադարեցման պահանջով, եթե դադարեցման պահին Ապահովադիրն ունի Ապահովագրողի հետ կնքված նմանատիպ՝ դադարեցման ենթակա Պայմանագրի/Վկայագրի միևնույն ապահովագրատեսակի գծով 15 (տասնհինգ) և ավելի գործող Պայմանագրեր/Վկայագրեր և/կամ ապահովագրության օբյեկտներ:

12.10. Սույն պայմանների 10.7.3. ենթակետով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթական չէ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
12.11. Պայմանագրի/Վկայագրի լուծման կամ վաղաժամկետ դադարման դեպքում, երբ այդպիսի լուծման կամ վաղաժամկետ դադարման հետևանքները նախատեսված չեն սույն Պայմաններով և/կամ Պայմանագրով/Վկայագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ, Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
12.12. Այն դեպքում, երբ Ապահովադրին վերադարձման ենթակա գումարի հաշվարկի արդյունքում ստացվում է

բացասական թվային գումար, ապա վերադարձման ենթակա գումարը սահմանվում է զրո (ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում):

12.13. Այն դեպքում, երբ Պայմանագրի/Վկայագրի լուծման կամ վաղաժամկետ դադարեցման պահի դրությամբ Ապահովագրողի կողմից իրականացվել է ապահովագրական հատուցում և/կամ Ապահովագրողն ստացել է ապահովագրական իրադարձությունների գծով ապահովագրական հատուցում վճարելու գծով հայտեր, ապահովագրության չլրացած ժամկետի համար Ապահովադրին ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

12.14. Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել դադարեցման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

12.15. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով կնքված Պայմանագիրը/Վկայագիրը Ապահովադրի նախաձեռնությամբ վաղաժամկետ լուծելու և սույն Պայմաններով նախատեսված այլ դեպքերում Ապահովադրին ապահովագրավճարը վերադարձվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ՝ Պայմանագիրը/Վկայագիրը վաղաժամկետ դադարեցնելու մասին Ապահովադրի դիմումի ստացման օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից տվյալ արտարժույթի համար հրապարակված փոխարժեքով, որը սակայն դուրս չի գալիս Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքի 10% (տասը տոկոս) շեղման սահմաններից:

13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

ա) Պայմանագրով/Վկայագրով և սույն Պայմաններով նախատեսված դեպքերում ստանալ ապահովագրական հատուցում,

բ) ներկայացնել դիմում ապահովագրության պայմանների փոփոխման, լրացուցիչ ապահովագրության և/կամ ապահովագրական գումարի մեծացման վերաբերյալ,

գ) Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում այն կորցնելու դեպքում գրավոր դիմում ներկայացնելուց հետո Ապահովագրողից ստանալ կրկնօրինակը: Կրկնօրինակը տրամադրելուց հետո կորցրած Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է անվավեր,

դ) վաղաժամկետ դադարեցնել Պայմանագիրը/Վկայագիրը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

ե) Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուին փոխարինել մեկ այլ անձով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Շահառուին փոխարինելու մասին Ապահովադիրը պարտավոր է գրավոր ծանուցել Ապահովագրողին: Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով ապահովագրական պատահարի տեղի ունենալուց հետո կամ երբ Շահառուն արդեն կատարել է Պայմանագրի/Վկայագրի գծով իր պարտականություններից որևէ մեկը կամ Ապահովագրողին ներկայացրել է ապահովագրական հատուցման պահանջ,

զ) ապահովագրական հատուցման մերժում ստանալու դեպքում Ապահովագրողից ստանալ նման որոշման պատճառաբանված հիմնավորումը:

13.2. Ապահովադիրը (Ապահովադրի կողմից սույն Պայմանների համապատասխան դրույթներին տեղեկացված լինելու դեպքում՝ նաև Լիազորված Վարորդը/Շահառուն) պարտավոր է՝

ա) ԱՄ-ն տրամադրել Ապահովագրողին՝ զննման նպատակով՝ սույն Պայմաններով նախատեսված բոլոր դեպքերում,

բ) Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս գրավոր տեղեկություններ հայտնել ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին, ինչպես նաև տվյալ ապահովագրության օբյեկտի գծով կնքված և կնքվող բոլոր ապահովագրության պայմանագրերի մասին՝ նշելով ռիսկերը, ապահովագրական գումարները, ապահովագրության պայմանագրերի համարները և դրանց գործողության ժամկետները,

գ) վճարել ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը)՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված չափով և ժամկետներում,

դ) Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում անհապաղ, սակայն ամեն դեպքում ոչ ուշ քան Ապահովադրին (Շահառուին) և/կամ Լիազորված վարորդին այդ մասին հայտնի դառնալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին գրավոր տեղեկացնել Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են էապես ազդել ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա,

ե) Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում անհապաղ, սակայն ամեն դեպքում ոչ ուշ քան Ապահովադրին (Շահառուին) և/կամ Լիազորված վարորդին այդ մասին հայտնի դառնալու պահից 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողին գրավոր տեղեկացնել ապահովագրված ԱՄ-ի գրանցման փաստաթղթերի (տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի), ԱՄ-ի բանալիների, գրանցման համարանիշերի կորստի, փոփոխման, ԱՄ-ն հաշվառումից հանելու կամ ՀՀ ՃՈ մարմիններում վերագրանցելու, Պայմանագրի/Վկայագրի կնքման ժամանակ նշված նույնականացման տվյալներ պարունակող ԱՄ-ի ագրեգատների փոփոխման, ինչպես նաև ԱՄ-ի օգտագործման, տիրապետման, տնօրինման իրավունքի դադարեցման մասին,

զ) եթե գողացված ապահովագրված ԱՄ-ն և/կամ ԼՍ-ն հայտնաբերվել կամ վերադարձվել են Ապահովադրին կամ հայտնի է դարձել նախկինում որպես գողացված հայտարարված ապահովագրված ԱՄ-ի գտնվելու վայրը, անմիջապես տեղեկացնել այդ մասին Ապահովագրողին, իսկ 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում հետ վերադարձնել Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումը:

Ապահովագրողը կարող է երկարաձգել 30 -օրյա (երեսնօրյա) ժամկետը:

Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվում է Ապահովագրողին վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը, ապա պարտավոր է Ապահովագրողին փոխանցել հայտնաբերված կամ

վերադարձված կամ նախկինում որպես գողացված հայտարարված ԼՍ-ն և/կամ ԱՄ-ի նկատմամբ սեփականության իրավունքը,
է) եթե պատճառված վնասն ամբողջությամբ կամ մասամբ հատուցվել է մեղավոր անձի կողմից, 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում հայտնել այդ մասին Ապահովագրողին,
ը) եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված հայցային վաղեմության ժամկետի ընթացքում պարզվի որևէ հանգամանք, որն օրենսդրության կամ սույն Պայմանների կամ Պայմանագրի/Վկայագրի պայմաններով ամբողջությամբ կամ մասամբ զրկում է Ապահովադրին (Շահառուին, Ապահովագրված անձին) ապահովագրական հատուցման իրավունքից, Ապահովադիրը պարտավոր է Ապահովագրողին ամբողջությամբ կամ մասամբ վերադարձնել ստացված ապահովագրական հատուցումը՝ Ապահովագրողի կողմից նշված ժամկետում,
թ) հետևել Ապահովագրողի ցուցումներին՝ ապահովագրական պատահարի գծով վնասների կարգավորման կապակցությամբ ձեռնարկվող գործողություններն իրականացնելիս,
ժ) կատարել ապահովագրված ԱՄ-ի շահագործման և սպասարկման հրահանգների պահանջները,
ի) Շահառուին (Ապահովագրված անձին, Լիազորված վարորդներին) ծանոթացնել սույն Պայմանների և Պայմանագրի/Վկայագրի դրույթներին:

13.3. Ապահովագրողն իրավունք ունի՝

ա) ստուգել ապահովագրության օբյեկտի վիճակը, ապահովագրության օբյեկտի մասին Ապահովադրի կողմից հայտնած տվյալների համապատասխանությունը փաստացի վիճակին, ապահովագրության օբյեկտի պահպանման և շահագործման նորմերի և կանոնների, ինչպես նաև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում դրա պայմանների պահպանումը,
բ) գրավոր պահանջ ներկայացնել Ապահովադրին ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին գրավոր տեղեկություններ հայտնելու վերաբերյալ,
գ) ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում ընդունելու համար անցկացնել ինքնուրույն ստուգումներ՝ սեփական հայեցողությամբ ներգրավելով մասնագետների,
դ) պահանջել, որ Պայմանագիրը/Վկայագիրը ճանաչվի անվավեր, եթե Պայմանագիրը/Վկայագիրը կնքելուց հետո պարզվի, որ Ապահովադիրն Ապահովագրողին հայտնել է ակնհայտ սուտ տեղեկություններ ապահովագրական պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության մասին,
ե) տալ Ապահովադրի (Շահառուի) համար պարտադիր ցուցումներ և ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են վնասի չափը նվազեցնելու, իրադարձության հանգամանքները, պատճառները, հնարավոր մեղավոր անձանց որոշելու համար,
զ) որոշել Ապահովադրին (Շահառուին, Տուժողին, Ապահովագրված անձին) ապահովագրական հատուցման վճարման ձևը (դրամական արտահայտությամբ կամ հատուցում համարժեք գույքով կամ վնասված գույքի վերանորոգում),
է) երկարաձգել ապահովագրական հատուցման վճարման ժամկետը, եթե Ապահովադրի կամ իր նախաձեռնությամբ նշանակված է կրկնակի/լրացուցիչ փորձաքննություն՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու հետևանքով վնասի չափը որոշելու համար,
ը) հետաձգել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունը որպես ապահովագրական պատահար ճանաչելու կամ չճանաչելու մասին որոշման կայացումը, եթե ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի կամ այլ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին վնաս պատճառելու հարցով գործը գտնվում է նախաքննության/հետաքննության փուլում կամ հարուցվել է քրեական գործ՝ մինչև ապահովագրական պատահարի հանգամանքների և/կամ պատճառի և/կամ վնասի չափի վերաբերյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերի ստացումը և դրանց ստուգումը,
թ) պահանջելու Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխում և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում կնքված Պայմանագրի/Վկայագրի պայմանները փոփոխող հանգամանքների և այնպիսի գործոնների առկայության դեպքում, որոնք կարող են ազդել ապահովագրության օբյեկտի ոչնչացման, վնասման կամ կորստի ռիսկի աստիճանի բարձրացման վրա: Փոփոխում կատարելու Ապահովագրողի մտադրության, ինչպես նաև Ապահովադրի՝ փոփոխության հետ համաձայն չլինելու դեպքում Պայմանագիրը/Վկայագիրն անմիջապես լուծելու Ապահովադրի իրավունքի մասին Ապահովագրողը պարտավոր է նախապես ծանուցել նրան: Եթե Ապահովադիրը (Շահառուն) առարկում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությունը և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարումը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու լուծել Պայմանագիրը/Վկայագիրը և հատուցելու Պայմանագրի/Վկայագրի լուծմամբ իրեն պատճառված վնասները,
ժ) որոշել ապահովագրական պատահարի արդյունքում ԱՄ-ին պատճառված վնասի չափը,
ի) իրականացնել Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս Ապահովադրի կողմից հայտնած անհատական տվյալների (անհատական տվյալների մասին ՀՀ օրենսդրության համաձայն) մշակում (ներառյալ դրանց տարածումը, օգտագործումը, պահպանումը, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրումը) ապահովագրական գործունեություն իրականացնելու, ապահովագրական պրոդուկտների կամ գործընկերների պրոդուկտների մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով, այդ թվում՝ կապի միջոցների օգտագործմամբ Ապահովադրի հետ ուղղակի կապ հաստատելու միջոցով, օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,
լ) միակողմանի լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ համաձայն սույն Պայմանների և ՀՀ գործող օրենսդրության,
խ) բողոքարկել ՀՀ ՃՈ մարմինների որոշումները,
ծ) չվճարել ապահովագրական հատուցում, եթե Ապահովադիրը (Շահառուն) և/կամ Լիազորված վարորդը ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալուց հետո և վերջիններիս հայտնի դառնալու պահից անհապաղ (սակայն ոչ ուշ քան 3 (երեք) ժամվա ընթացքում)) իրեն չի տեղեկացրել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին,
կ) ապահովագրական հատուցման չափը որոշելիս հաշվանցել Պայմանագրի/Վկայագրի գծով կետանցված ապահովագրավճարի հերթական մասի գումարը,

h) եթե Պայմանագրում/Վկայագրում նշված ժամկետում, սահմանված չափով Ապահովադիրը չի վճարում ապահովագրավճարը՝ Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի դադարեցնել Պայմանագիրը/Վկայագիրը կամ յուրաքանչյուր կետանցված օրվա համար կիրառել տույժ՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրավճարի 0,1 %-ի (զրո ամբողջ մեկ տասնորդական տոկոսի) չափով,
ձ) պահանջել իրեն հանձնել ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի այն վնասված և փոխարինման ենթակա պահեստամասերը, որոնց գծով Ապահովադիրը (Շահառուն) ստացել է ապահովագրական հատուցում,
13.4. Ապահովագրողը պարտավոր է՝
ա) Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովադրին ծանոթացնել սույն Պայմաններին, բացատրել Պայմանագիր/Վկայագիր կնքելու կարգը, Ապահովադրին տրամադրել Պայմանները, Պայմանագիրը/Վկայագիրը,
բ) չհրապարակել Ապահովադրի Ապահովագրված անձի, Շահառուի, նրանց գույքային կարգավիճակի մասին տեղեկություններ՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,
գ) Ապահովադրին հայտնել ապահովագրական հատուցման վճարման ժամկետների կամ փաստաթղթերի քննման ժամկետների ավելացման մասին,
դ) կատարել սույն Պայմաններով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործողություններ:
13.5. Սույն Պայմանների հիման վրա Ապահովագրողի հետ Պայմանագիր/Վկայագիր կնքած Ապահովադիրը հաստատում է իր համաձայնությունը՝ կապված Ապահովագրողի կողմից ստորև թվարկված Ապահովադրի անհատական տվյալների մշակման հետ՝ Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրություն իրականացնելու համար, այդ թվում՝ պայմանագրի գծով ապահովագրական ծառայությունների տրամադրման, վնասների կարգավորման, պայմանագրի վարման որակը ստուգելու նպատակով, ինչպես նաև Ապահովադրին՝ Ապաահովագրողի այլ պրոդուկտների և ծառայությունների վերաբերյալ տեղեկացնելու նպատակով:
Ապահովադրի անհատական տվյալները ներառում են. անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և վայրը, անձնագրային տվյալները, բնակության հասցեն, Ապահովագրողի հետ կնքած Պայմանագրում/Վկայագրում նշված այլ տեղեկություններ (ներառյալ դրա անբաժանելի մասերը՝ ապահովագրության դիմում, հավելվածներ և այլն), որոնք ՀՀ օրենսդրության համաձայն կարող են դասվել անհատական տվյալներին:
Սույն Պայմանների սույն կետի վերը նշված դրույթները վերաբերում են նաև Շահառուին/Ապահովագրված անձին՝ նրանց կողմից անհատական տվյալների մշակման համար Ապահովագրողին գրավոր համաձայնություն տալու դեպքում:

14. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14.1. Ապահովագրողի և Ապահովադրի համաձայնությամբ, ի լրումն սույն Պայմանների 3.9., 5.5., 9.1., 9.2. և 9.3. կետերով նախատեսված դրույթների, կիրառվում են նաև սույն Պայմանների Բաժին 14-ի դրույթները, եթե այդ մասին Պայմանագրում/Վկայագրում առկա է հատուկ նշում:
14.2. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝
ա) ԱՄ-ով երթևեկելու ընթացքում ԱՄ-ի վարորդը երթևեկել է հանդիպակաց երթուղով, որտեղ արգելված է երթևեկությունը կամ հատել է հանդիպակաց երթուղին բաժանող հոծ գիծը և հետադարձ կամ շրջադարձ է կատարել, արգելված վայրերում հետընթաց կամ շրջադարձ կամ հետադարձ է կատարել,
բ) դիմապակուն վնաս է պատճառվել կամ այն հափշտակվել է,
գ) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը գերազանցել է ԱՄ-ի սահմանված (թույլատրված) արագությունը 25-ից 50%-ով (քսանհինգից հիսուն տոկոսով),
դ) Ապահովադիրը կամ Լիազորված վարորդը ԱՄ-ով մուտք է գործել լուսացույցի կարմիր արգելող ազդանշանի տակ,
ե) ՃՏՊ ժամանակ ԱՄ-ն գտնվել է առանց համապատասխան կառավարման. ԱՄ-ի վարորդի ուշադրությունը զբաղված է եղել բջջային հեռախոսով, ռադիոկապով կամ այլ նմանատիպ ակսեսուարներով,
զ) ԱՄ-ն օգտագործելիս խախտվել են փակ և միակողմանի փողոցների նշանների պահանջները,
է) ԱՄ-ին և/կամ ԼՍ-ին պատճառված վնասը կամ ԱՄ-ի և/կամ ԼՍ-ի ոչնչացումը տեղի է ունեցել ճանապարհածածկի վրա առկա անհարթությունների հետևանքով:
14.3. Համաձայն սույն Պայմանների՝ չեն հատուցվում հետևյալի արդյունքում առաջացած վնասները՝
ա) ԱՄ-ով թունավոր կամ պայթուցիկ նյութերի փոխադրման,
բ) ԱՄ-ի սահմանված (թույլատրված) արագության ավելի քան 50%-ով (հիսուն տոկոսով) գերազանցման,
գ) ձայնային կամ գերձայնային արագությամբ ընթացող ինքնաթիռի կամ այլ թռչող ապարատի առաջացրած ճնշման ալիքների:
14.4. Հատուցման ենթակա չեն ԱՄ-ում մշտապես տեղադրված միայն ռադիո կամ հեռահաղորդակցության սարքի կորուստը կամ վնասը:
14.5. Պայմանագրում/Վկայագրում սույն Պայմանների Բաժին 14-ի կիրառման մասին հատուկ նշում առկա լինելու դեպքում ապահովագրավճարի նկատմամբ կիրառվում է նվազեցնող գործակից Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չափով:

15. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)

15.1. Ապահովադրի (Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի սահմաններում:
15.2. Ապահովադիրը (Շահառուն) պարտավոր է հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

15.3. Եթե Ապահովադիրը (Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադրի (Շահառուի) մեղքով, Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

16. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

16.1. Սույն Պայմանների համաձայն կնքված Պայմանագրից/Վկայագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:
16.2. Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:
16.3. Վիճելի հարցեր լուծելու դեպքում Պայմանագրի/Վկայագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների և սույն Պայմանների հիման վրա մշակված Ծրագրի նկատմամբ:
16.4. Վիճելի հարցեր լուծելու դեպքում սույն Պայմանների հիման վրա մշակված Ծրագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների նկատմամբ:

17. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

17.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ հեղեղման, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև այլ կառավարության կողմից սահմանված սահմանափակումների և արգելքների:
17.2. Այն դեպքում, երբ սույն Պայմանների 17.1 կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:
17.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը: